



Բայց բերրի հողում ցանվածը նա է, ով խոսքը լսում է, միտք առնում
և պտուղ տալիս, որը՝ հարյուր, որը՝ վաթսուն, որը՝ երեսուն...

ՄԵՐՄՆԱՑԱՆ

ԵՐԵՎԱՆԻ Ա.Հ.Ք. «ՎԵՐԱՏՈՒՆ» ԵՎԵՂԵՅԻ, «ՄԵՐՄՆԱՑԱՆ» ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐՏ, 2010, (N 65)

ՇՆՈՐՀԱՎՈՐ ԿԱՆԱՆՑ ՄԻԱՄԱՅԱԿԸ



ԱՅՆ ՄԱՍԻՆ, ԹԵ ԻՆՉՊԵՆ
ԱՌԱՋԱՅԱԿ ՄԱՐՏԻ 8-Ը



ԲԵՐՏ ՔԼԵՆԴԵՆԵՆԻ
ՎԵՐՋԻՆ ՈՒՂԵՐՉԸ



ՍՄԻԹ ՈՒԻԳԼՍՈՐԹ



ՀԱՐՑԱԶԵՐՈՒՅՑ
ԽԱՉԱՏՈՒՐ ՉՈՒԱՆՅԱՆԻ
ՀԵՏ



ՍՊՈՐՏԸ՝ ՔԻՍՈՆՅԱՅԻ
ԱՉՔԵՐՈՎ

Աստվածաշնչյան կանայք

«Եվ Տեր Աստված ասաց. «Աղեկ չէ, որ Ադամը մեծակ լինի. նրան մի օգնական շինեմ՝ իրեն հարմար»... Եվ Տեր Աստված խորունկ քուն բերեց Ադամի վրա, և նա քնեց: Նրա կողի ոսկորներից մեկն առավ ու տեղը միս լցրեց: Տեր Աստված Ադամից առած կողի ոսկորը կին շինեց ու նրան Ադամին բերեց...» Ծննդ. 2:18,21-22

Աստվածաշունչը վկայում է և ասում, որ Աստված, երբ ավարտում էր իր ստեղծագործությունը, նայում էր ու տեսնում, որ բարի է: Այդպես անցնում է հինգ օր: Վեցերորդ օրը Աստված ստեղծեց մարդուն, սակայն Աստվածաշունչը շարունակում է պատմությունը՝ ասելով, որ Աստված տեսավ, որ ինչ-որ բան պակասում էր. դա Ադամի օգնականն էր: Բնականաբար, կենդանիները հարմար օգնական չէին կարող լինել, և Աստված արարեց կնոջը: Արարեց շատ հետաքրքիր կերպով: Այդ հրաշալի ստեղծագործությանը Ադամը անվանեց Եվա, որ նշանակում է Կյանք:

Աստծո ծրագիրը միշտ էլ անթերի է, և, բնականաբար, այդպես էր նաև այս դեպքում: Կինը ստեղծվեց որպես կատարելության լրում, ստեղծագործության ավարտ:

Ու թեև մինչ 20-րդ դարը կինը համարվում էր «ավելի ցածր դաս», այնուամենայնիվ, աշխարհի պատմության սկզբից էլ տեսնում ենք կնոջ հսկայական դերն ու միջամտությունը պատմության ընթացքին: Աստվածաշնչում մեզ հանդիպած առաջին կինը Եվան է, ում հիշում ենք ոչ այդքան «բարձր տրամադրությամբ», սակայն չպետք է մոռանալ, որ նա ողջ աշխարհի մայրն է համարվում և կարևոր է այնքան, որքան Ադամը: Այնուհետև, հանդիպում ենք Սառային՝ Աբրահամի կնոջը, ով, չնայած իր ծերությանը, իր թերահավատությանը, այնուամենայնիվ, երբեք Աբրահամին մեծակ չթողեց ու ամենուր նրա հետ էր: Եվ պատահական չէր, որ նրա անունը թարգմանվում է որպես իշխանուհի: Կանայք Աստվածաշնչում շատ են, սակայն խոսենք այն կանանց մասին, ովքեր ինչ-որ կերպ ազդել են պատմության ընթացքի վրա:

Ռախաբը, որ թեև հայտնի էր իր անառակ վարքով, սակայն կարողացավ իր և իր ընտանիքի համար փրկության ճանապարհ լինել՝ հավատալով Աստծո ամենակարողությանը:

Մարիամը՝ Մովսեսի քույրը, որ թեև ըմբոստացավ Մովսեսի դեմ, սակայն գիտենք, որ նա շնորհ էր գտել Աստծո մոտ, և Սուրբ Գիրքը նրան անվանում է մարգարեուհի:

Յուդիթը, որ լինելով այլազգի, չհեռացավ իր սկեսրոջից անգամ այն ժամանակ, երբ ուներ դրա իրական պատճառները, ընդունեց նրա հավատքը, դարձավ Աստծուն և կարևոր տեղ զբաղեցրեց Քրիստոսի ազգաբանության մեջ:

Դեբորան, որ մարգարեուհի էր և քաջ դատավոր: Պատմությունն ասում է, որ անգամ զորավար Բարակը համաձայնեց զնալ պատերազմի միայն այն դեպքում, երբ իր հետ կգա նաև Դեբորան:

Աննան՝ Սամուել մարգարեի մայրը, որ հայտնի է բոլորին իր հարատև աղոթքներով: Իր աղոթքների շնորհիվ էր, որ Աստված նրան ողորմաց և որդի

պարգևեց, ով պետք է դառնար Աստծո մարգարեն ու նրա ձայնը և օժեր Իսրայելի թագավորին:

Սուրբ Գիրքը հիշատակում է **հրեա աղախնի** մասին, որի վկայության շնորհիվ ասորի զորավար Նեեմանը կարողացավ ոչ միայն ֆիզիկական առողջության, այլև փրկության արժանանալ:

Եսթեր թագուհին, որ դառնալով Պարսկաստանի Ասուերոս թագավորի կինը, վտանգեց իր կյանքը. առանց հրավերի գնաց արքայի մոտ և նրան հրավիրեց խնջույքի, որտեղ էլ համարձակորեն բացահայտեց Յամանի նեեզ ծրագիրը և կարողացավ փրկել իր ժողովրդին մոտալուստ կործանումից:

Մարիամը՝ Հիսուսի մայրը, որ այնքան մաքուր ու առաքինի գտնվեց, որ պատիվ ունեցավ լինելու Հիսուսի մայրը:

Սամարացի կինը, ով թեև հայտնի էր ոչ այնքան առաքինի վարքով, այնուամենայնիվ, դարձավ մեսիայի՝ Հիսուս Բրիստոսի վկան Սամարիայում: Նոր Կտակարանում կանայք ևս շատ են, մարդիկ, ովքեր պատրաստ էին գործել Տիրոջ համար: **Այծեմնիկը**, որ սիրում էր Աստծուն, **Լիդիան**, որ դարձավ իր տարածքի առաջին հոգևոր մարդը և այսպես շարունակ...

Աստվածաշունչը բավականին շատ է խոսում կանանց մասին, կանայք, ովքեր հայտնի էին իրենց հավատարմությամբ, աղոթքի կյանքով և Աստծո նկատմամբ անսահման սիրով:

***Սիրելի՛ քույրեր**, սրտանց շնորհավորում ենք բոլորիդ գեղեցկության տոնի կապակցությամբ: Ցանկանում ենք, որ մնաք միշտ գեղեցիկ ու սիրված: Լինեք առաքինի ու ձեր խոնարհությամբ ցույց տաք աշխարհին Քրիստոս, լինեք հարատև աղոթքի մեջ ու ցույց տաք աշխարհին աղոթքի զորությունը: Միշտ ժպտացեք ու պարզեք աշխարհին խի՞նդ ու բերկրանք: Թող Աստված օրհնի ձեզ, լեցնի սիրով ու թող ձեր աչքերում մշտապես թևածի խաղաղությունը:*



«Կինը ստեղծվեց Ադամի կողոսկրից, ոչ թե գլխից՝ նրան իշխելու, ոչ էլ ոտքերից՝ նրա կողմից տրորվելու, այլ կողից՝ նրա հետ հավասար լինելու, նրա թևի տակ պաշտպանություն գտնելու և նրա սրտին մոտ՝ սիրված լինելու համար»:

Սեթյու Հենրի

«ՍԵՐՄԱՑԱՆ» խմբագրություն



ԵՎ ԶՎԱՐՃԱՆԱՆՔ

Տառերը դասավորիր ճիշտ հերթականությամբ որպեսզի ստանաս Աստվածաշնչյան հերոսների և քաղաքների անունները:

փհոսեվ _____
 ոսմանա _____
 ոպերստ _____
 իստուհ _____
 աամդ _____
 ակմոսր _____
 մսվեոս _____

աուսրդեմե _____
 զարաեմք _____
 անքան _____
 բեհեմբլե _____
 մդայի _____
 եգոսիպտ _____
 ոհմռ _____

Ընտրիր ճիշտ տարբերակը


1. Հիսուսն ասաց. (լայն, նեղ) է այն դուռը, որ դեպի կորուստ կտանի:
2. Հովնան (Նինվե, Երուսաղեմ) քաղաք ուղարկվեցավ:
3. Դավիթն ասաց. (Հրեշտակները, երկինքը) Աստծո փառքը կը պատմեն:
4. Հոբի (կինը, բարեկամներից մեկը) ասաց նրան, որ հայիոյի Աստծուն:

Բարեկամական կապ

Ակիդայոս Պրիսկիդա _____
 Կիս Սավուդ _____
 Մուրթբե Եսթեր _____
 Բոսս Հոուս _____
 Պետրոս Անդրեաս _____
 Անանիա Սափիրա _____
 Մովսես Հոթոր _____
 Դավիթ Հոուս _____
 Սառա Աբրահամ _____

Հարցեր Հիսուս Քրիստոսի մասին

1. Խաչի վրա Քրիստոսի վերջին խոսքերը:
2. Խաչվելուց առաջ նրա կատարած վերջին հրաշքը:
3. Ո՞րն է Հիսուսի խոսացած առաջին արձանագրությունը:
4. Ո՞ր երկու հրաշքներն են, որ չորս ավետարաններում էլ նշված են:
5. Հիսուսի մկրտության ժամանակ Աստված ի՞նչ ասեց:
6. Այն երեք մարդկանց անունները, ում Հիսուսը հարություն տվեց մեռելներից:



ՆԵՐԿԻՐ ԻՆՔՂ

Դասարանի առջև ուսուցչուհին բացատրում է աշակերտներին, թե ինչու են հավատացյալներին անվանում քրիստոնա:

Ցավալին այն էր, որ ուսուցչուհին ուներ բնավորության վատ հատկանիշ. շատ էր բարկանում, նյարդայնանում և երբեմն բռնվում էր շատ բարձր: Այդ մասին գիտեին նաև աշակերտները:

Դասի վերջում ուսուցչուհին հարցնում է.

- Երեխաներ, ո՞վ կարող է ասել, թե ինչու են ինձ անվանում քրիստոնյա:

Երկար լռությունից հետո աշակերտներից մեկը վախվորած ասաց.

- Երևի Ձեզ լավ չեն ճանաչում...

Ներկայացրեց Դավիթ Նիսայանը

ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՏՈՒԹՅՈՒՆ

ԱՄԵՆԱԹԱՆԿ ՆՎԵՐԸ

- Երեխաներ, գիտե՞ք, թե ինչ օր է այսօր,- հարցրեց դպրոցի ուսուցիչը:

- Այսօր մարտի 1-ն է,- պատասխանեց Հրաչը՝ չսպասելով իր հերթին:

- Ճիշտ է, -ասաց ուսուցիչը,-սակայն ով կարող է ավելացնել, թե նաև ինչ օր է այսօր:

- Ես գիտեմ, ես գիտեմ,- անընդհատ կրկնում էր Անահիտը, - ես գիտեմ, պատասխանե՞մ:

- Ասա՛, Անահիտ,- թույլ տվեց պատասխանել ուսուցիչը:

- Այսօր զարման առաջին օրն է, տատիկս ասում է, որ զարմանը ձյունը հալչում է, ձնծաղիկը իր աչուկներն է բացում ձյան տակից, արջը արթնանում է իր ձմեռային խորը քնից: Նաև զարուհը բերում է ուրախություն, ու բնությունը զարթոնք է ապրում:

- Իսկապես, երեխաներ, Անահիտը ճիշտ ասաց: Սակայն մի գեղեցիկ տոն կա մարտի սկզբի օրերին: Ո՞վ կարող է ասել, թե որ տոնն է այդ:

Դասարանը միանգամից աշխուժացավ, ու երեխաները առանց իրար հերթ տալու սկսեցին գոչել՝ մարտի 8-ն է, մարտի 8-ը:

- Այո, բոլորդ էլ ճիշտ եք, -ասաց ուսուցիչը: Իսկ դուք մտածել եք, թե ինչ եք նվիրելու ձեր մայրերին, տատիկներին ու քույրերին մարտի 8-ին:

Դասարանում տիրեց քար լռություն. ոչ ոք չէր մտածել, թե ինչ է նվիրելու:

Լռությունը խախտեց ուսուցիչը և ասաց.

- Երեխաներ, պարտադիր չէ, որ դուք գնեք ինչ-որ քանակարժեք իրեր: Չէ՞ որ դուք դեռ այնքան էլ մեծ չեք, որ ձեր վաստակած գումարով նվերներ գնեք: Սակայն ինքներդ էլ կարող եք պատրաստել նվերներ: Երեխաները զարմացել էին, թե ինչպես կարող են իրենք անձամբ պատրաստել նվերներ:

- Երեխաներ, ձեզնից ամեն մեկը Աստուծուց օժտված է ինչ-որ շնորհքով, տաղանդով, և դուք կարող եք ինքնուրույն մտածել՝ ինչ պատրաստել և նվիրել ծնողներին: Օրինակ՝ մեկը, գուցե, կարողանում է լավ նկարել, մյուսը՝ ասեղնագործել, երրորդը՝ երգել և այլն:

«Նվերներ պատրաստել, տաղանդ, շնորհք...այս ինչ դժվար փորձություն է ինձ սպասվում», - մտածում էր Արսենը՝ վերադառնալով դասից տուն: Նա անդադար հիշում էր ուսուցչի խոսքերը, բայց չէր հասկանում, թե որն է իր տաղանդը, որի միջոցով պիտի նվերներ պատրաստեր: Եվ նա վճռեց՝ եթե ուսուցիչը ասում է, ուրեմն՝ ես հաստատ ունեմ պարզև Աստուծուց: Նա, հասնելով տուն, անմիջապես վազեց իր սենյակ, փակեց դուռը ու սկսեց աղոթել: Արսենը շատ էր ուզում հասկանալ՝ որն է իր



տաղանդը: Աղոթքի մեջ նա խնդրում էր իր ծնողների, ընտանիքի, նաև պարզևի համար: Երբ աղոթում էր, մի պահ մոռացավ ամեն բան և սկսեց ջերմեռանդորեն աղոթել տատիկի համար, ով հիվանդ էր: Նա վստահում էր Աստուծուն և գիտեր, որ ունենալու է նվերներ, և այն պարզևելու է Աստված: Անցավ մի քանի օր: Արսենն անգամ մոռացել էր, որ աղոթել էր իր հիվանդ տատիկի համար:

Արդեն մարտի 7-ն էր, և Արսենը դեռ չուներ նվերներ իր մայրիկի ու տատիկի համար: Բայց նա գիտեր, որ ինչ-որ կերպ կունենա նվերներ մարտի 8-ի համար: Նա վստահում էր Աստուծուն: Մարտի 7-ի երեկոյան, երբ բոլորը հավաքված էին, Արսենը նկատեց, որ բոլորը մտահոգված այս ու այն կողմ են վազվզում: Նա կցկտուր խոսակցություններից հասկացավ, որ վատացել է տատիկը: Եվ հիշեց, որ մի քանի օր առաջ աղոթել է տատիկի համար: Նա մոտեցավ ծնողներին ու ասաց.

-Հայրիկ, մայրիկ, ես աղոթել եմ տատիկի համար ու վստահ եմ, որ Հիսուսը կբժշկի նրան: Տատիկը շուտով իրեն լավ կզգա: Ծնողները մի պահ զարմացան, բայց իրենք էլ այդ պահին ծնկեցին ու Արսենի հետ միասին նուրբ աղոթեցին: Քիչ անց տատիկն իրեն արդեն լավ էր զգում:

Առավոտյան՝ մարտի 8-ին, տատիկը ցանկացավ տեսնել Արսենին: Արսենը մի փոքր անհանգիստ գնաց տատիկի սենյակ: Նա իրեն վատ էր զգում, որ առանց նվերի այցելում է տատիկին, մանավանդ, որ տատիկը հիվանդ էր ու կուրախամար նվերով:

Երբ Արսենը բացեց դուռը, տատիկը լայն բացեց իր թևերը և գրկեց սիրելի թոռնիկին:

-Ես այնքան ուրախ եմ, որ քեզ նման թոռնիկ ունեմ: Դու աշխարհի ամենաթանկ նվերը տվեցիր ինձ մարտի 8-ին,- ասաց տատիկը Արսենին:

Արսենը զարմացավ և գլուխը կախելով ասաց.

-Բայց ես քեզ ոչինչ չեմ նվիրել:

-Ինչպե՞ս թե,- ժպտալով պատասխանեց տատիկը,- մի՞թե դու չէիր աղոթել ինձ համար: Քո աղոթքի շնորհիվ ես այսօր ինձ լավ եմ զգում: Դա ամենաթանկ նվերն է ինձ համար, որ կարող էի քեզնից ստանալ:

Արսենը բարձրացրեց գլուխը և հասկացավ, որ իսկապես նվերն Աստուծուց էր: Նա այնքան երջանիկ էր, որ գտել է իր բազում շնորհքներից մեկը՝ աղոթել ուրիշների համար:

Այդ ժամանակ Արսենին գրկեց մայրը և ասաց.

-Այո, ես էլ եմ հպարտ, որ քեզ նման որդի ունեմ, դու իսկական նվեր ես ինձ համար, իմ ամբողջ կյանքի համար: Նաև իմ նվերն ես մարտի 8-ին և բոլոր տոներին:

Արսենն ուրախ ու երջանիկ էր, որ Աստված օրհնել էր իր տունը:

Հանկարծ հայրը նրան կանչեց սենյակի մի անկյուն և տատիկից ու մայրիկից գաղտնի ասաց.

-Ի՞նչ կարծիքի ես, չգնա՞նք մեր կանանց համար այսօրվա առթիվ ծաղիկներ գնելու:

Արսենը ուրախությունից թռչկոտում էր:

Ներկայացրեց Աննա Հովհաննիսյանը

Այն մասին, թե ԻՆՉՊԵ՞Ս ԱՌԱՋԱՑԱՎ ՄԱՐՏԻ 8-Ը

Շատերին է հայտնի, որ կանանց միջազգային օրը կապվում է Կլարա Ցետկիյինի անվան հետ, սակայն մինչ 20-րդ դարը, պատմության մեջ հայտնի են դեպքեր, երբ տարբեր օրեր կատարվել են տոնակատարություններ՝ նվիրված կանանց, և այդ օրերը հիմնականում եղել են գարնանը: Մինչ ներկայացնելը մարտի 8-յան՝ մեզ հայտնի պատմությունը, ներկայացնենք ևս երկու պատմական իրողություններ, որոնք, միգուցե, հիմք են ծառայել նաև այժմյան գեղեցիկ տոնի համար:

Աստվածաշնչյան «մարտի 8»

Աստվածաշնչից տեղեկանում ենք եսթեր թագուհու պատմությանը: Եսթերը հրեա աղջիկ էր, ով թաքցրեց իր ազգային պատկանելիությունը և դարձավ թագուհի: Սակայն որոշ ժամանակ թագավորի կառավարիչներից Յաման անունով մեկը, բարկանալով մի հրեայի վրա, ով իր առջև չէր խոնարհվել, որոշում է բնաջինջ անել բոլոր հրեաներին: Եսթեր թագուհին, իմանալով այդ մասին, վտանգելով իր կյանքը, (ծոմից և աղոթքներից հետո) մոտենում է թագավորին և խիզախությամբ պատմում եղելությունը: Թագավորը ընդառաջում է թագուհուն, իսկ նեմգ Յամանը կախաղան է բարձրացվում: Փրկության համար ողջ հրեա ազգը ուրախությամբ տոնում է մի տոն՝ նվիրված իրենց ազատագրմանն ու Եսթեր թագուհուն Ադամա ամսի 13-ին, որը ներկայիս օրացույցով ընկնում է փետրվարի վերջից մինչ մարտի սկիզբ ընկած ժամանակահատվածը:

Հին Հռոմեական «մարտի 8»

Նմանօրինակ մի տոնակատարության հանդիպում ենք նաև Հին Հռոմում: Բոլոր ամուսնացած կանայք այդ օրը նվերներ էին ստանում իրենց ամուսիններից, ստրկուհիները այդ օրն ազատ էին արձակվում, և բոլորը գեղեցիկ հագնված գնում էին Գարնան աստվածուհուն նվիրված տաճարը: Հասկանալի է, որ այդ օրը նշվում էր գարնան սկզբներին:



ԿԱՆԱՆՑ ՄԻ- ՋԱԶԳԱՅԻՆ ՕՐԻ՝ ՄԱՐՏԻ 8

Իսկ ինչպե՞ս կանանց օր հայտարարվեց ամբողջ աշխարհում, ի՞նչ պատմություն ունեցավ այն արդեն մեր օրերում:

1869թ.-ին բրիտանացի պատգամավոր Յոն Ստյուարտ Միլը առաջին մարդն էր, ով խորհրդարանում բարձրացրեց կնոջ՝ ընտրության ծայնի իրավունքը: 1893թ.-ին Նոր Զելանդիան դարձավ առաջին պետությունը, որ թույլ տվեց կնոջը քվեարկել: Այլ երկրներում կանայք երկար տարիներ զրկված էին ծայնի ազատության իրավունքից:



Կլարա Ցետկին

1910թ.-ին Կոպենհագենում «Գործունյա կանանց» 2-րդ միջազգային կոնֆերանսի ժամանակ Կլարա Ցետկին անունով մի կին (ծն. 1857թ.), ով Գերմանիայի դեմոկրատական կուսակցության «Կանանց գրասենյակ»-ի առաջնորդն էր, առաջարկեց կանանց միջազգային օրվա գաղափարը:

Արդեն հաջորդ տարում՝ 1911թ.-ին, պատմության մեջ առաջին անգամ նշվեց կանանց միջազգային օրը, և որքան էլ որ զարմանալի չլինի, այն նշվեց ոչ թե մարտի 8-ին, այլ մարտի 19-ին: Առաջին անգամ այն նշվեց Գերմանիայում, Ավստրիայում, Դանիայում և Շվեյցարիայում: Կանանց միջազգային օրվա լուրը շատ արագ տարածում գտավ ամբողջ աշխարհում: Մինչ այդ օրն արագ տարածում գտան երկու նշանավոր ամսագրեր՝ «Գերմանիայում ծայն կանանց» և «Կանանց օրն Ավստրիայում»: Բոլոր հողվածները խոսում էին կանանց խոսքի, ծայնի ազատության մասին: 1911թ.-ի կանանց առաջին միջազգային օրվա հաջողությունը վեր էր ամեն սպասվածից: Տարբեր քաղաքներում և գյուղերում կազմակերպվում էին հանդիպումներ, որտեղ խոսվում էին կանանց մասին, այնուհետև հենց այդ հանդիպումներում էլ շատ կանանց աշխատանքներ էր առաջարկվում:

1912 թ.ին նույն երկրներում տոնը նշվեց մայիսի 12-ին: 1913 թ.ին Գերմանիայում այն նշվեց մարտի 12-ին, Ավստրիայում, Չեխիայում, Շվեյցարիայում, Հունգարիայում՝ մարտի 9-ին, Ռուսաստանում և Ֆրանսիայում՝ մարտի 2-ին: Միայն 1914 թ.ից սկսած բոլոր երկրները սկսեցին տոնել կանանց միջազգային օրը մարտի 8-ին:



Նիգերիայում շարունակվում են կրոնական հողի վրա ծագած անկարգությունները

Պեռևս մարտի 7-ին Նիգերիայում սկսվեցին միկրոնական բախումներ, որին զոհ գնաց, ըստ պաշտոնական տվյալների, շուրջ 200 մարդ, թեև ոչ պաշտոնական աղբյուրները խոսում են ավելի քան 500 քրիստոնյաների զոհերի մասին: Թեև դա մեծ իրարանցում առաջացրեց, սակայն մինչև այսօր էլ շարունակվում են մնանատիպ բախումները: Ջոս քաղաքի մոտակա գյուղերից մեկում, որտեղ այս տարվա կտրվածքով հաշվվում են շուրջ 100 մարդկային կյանքի կորուստներ, Reuters գործակալությունը հաղորդում է նոր՝ 11 զոհերի մասին:

ՆՈՐՈՒԹՅՈՒՆ



Մարտի 8-յան ծաղիկներ

Մարտի 7-ին՝ կիրակի օրը, «Վերնատուն» եկեղեցու եղբայրները, ավագ հովիվ Նոդար Թադևոսյանի գլխավորությամբ, գեղեցիկ անակնկալ էին պատրաստել քույրերի համար: Պաշտամունքի վերջում եղբայրները քույրերին նվիրեցին գեղեցիկ շնորհավորական բացիկներ և ծաղիկներ՝ մեկ անգամ ևս կարևորելով քույրերի դերն ու նշանակությունը եկեղեցում:

Պակիստանում մուսուլմանը այրել է 12-ամյա քրիստոնյա աղջնակի

Պակիստանի Պենջաբ նահանգում մարմնի շուրջ 80% այրման հետևանքով մահացել է 12-ամյա Կիրան Ջորջը: Նա աշխատում էր մուսուլմանի տանը: Տանտիրոջ որդին սկսել է սեռական բռնությունների դիմել, իսկ վերջինս, վախենալով նրանից, այդ մասին ծնողներից բացի ոչ ոքի չի պատմել, իսկ ծնողներն էլ իրենց հերթին խնդրել են դատերը լռել ու այդ մասին այլևս չխոսել: Սակայն մի օր պատանի աղջնակը սիրտը բացել է ընկերուհու մոտ, ինչն էլ իմացել է մուսուլմանը: Արդյունքում իր իսկ սեփական տանը վայրենի մոլեռանդը բենզին է լցրել աղջնակի վրա ու այրել: Թեև հասցրել են տուժածին հիվանդանոց տանել, սակայն աղջնակը, բացի մուսուլմանի դեմ վկայություն տալուց ոչինչ չի հասցրել անել: 2-րդ օրը նա մահացել է հիվանդանոցում: մուսուլմանի դեմ հարուցվել է քրեական գործ:

Երիտասարդական՝ հատուկ քույրերի համար

Քույրերին գեղեցիկ անակնկալ մատուցեցին նաև



Երիտասարդները՝ Մարտի 8-յան պաշտամունքը վերածելով գեղեցիկ միջոցառման: Շնորհավորական գեղեցիկ բացիկներ ստանալուց բացի քույրերի պատվին կազմակերպվել էր գեղեցիկ ժամանցային երեկո՝ համեմված հետաքրքրաշարժ պատմություններով, խաղերով, ինչպես նաև հրաշալի փառաբանությամբ, որը առաջնորդում էին գ. Յովտաշենի «Վերնատուն» եկեղեցու երիտասարդները:



Ռեյնհարդ Բոնկեն պատրաստվում է գալ Ուկրաինա

Աշխարհահռչակ ավետարանիչ Ռեյնհարդ Բոնկեն պատրաստվում է գալ Կիեվ, որտեղ հանդես կգա ծառայողների, միսիոներների և

ավետարանիչների համար նախատեսված կոնֆերանսներով: Այցը նախատեսվում է այս տարվա հունիսի 5-6: Մարտի 9-ին «Ֆիլադելֆիա» եկեղեցում կայացավ հանդիպում տեղի հովիվների ու Cfan-ի (Ռ. Բոնկեի ծառայությունը) եվրոպական մասի տնօրեն Ջիլկֆրիդի միջև: Հանդիպման ժամանակ ճշտվեցին բոլոր մանրամասները՝ կապված ավետարանիչ այցի, ծառայության ու կազմակերպվելիք կոնֆերանսների մասին: Հովիվ Ջիլկֆրիդը, խոսելով կոնֆերանսի մասին, ասել է. «Այն կլինի մեծ քաջալերան և օրհնություն բոլոր նրանց համար, ովքեր վառվում են չփրկվածների փրկության առաջնորդելու ցանկությամբ»:

ՕՐՅՆՈՒԹՅՈՒՆ

Ինդոնեզիայում մուսուլմաններն այրել են երկու եկեղեցի և հովվի տունը

Ավագ Հովիվ Նոդար Թադևոսյանը Իտալիայում

Մարտի սկզբին «Վերնատուն» եկեղեցու ավագ հովիվ Նոդար Թադևոսյանը երկշաբաթյա այցով մեկնել էր Եվրոպա՝ մասնակցելու Իտալիայում կայանալիք միջազգային քրիստոնեական կոնֆերանսի: Կոնֆերանս, որտեղ խոսվել է աշխարհի ժամանակակից իրավիճակի, վերջին օրերի և ճշմարիտ պաշտամունքի մասին, ինչպես նաև արծանագրվել այն ցավալի փաստը, որ այսօր Եվրոպայում քրիստոնեությունը բավականին վտանգված է:



Ն. Թադևոսյանը և Վ. Պավլովսկին

«ՉԵՍՈՒ» միջեկեղեցական միսիոներական դպրոցի շրջանավարտների հանդիպում

Մարտի 13-ին «Վերնատուն» եկեղեցուն էին հավաքվել 3 տարիների «Չեսու» դպրոցն ավարտած շրջանավարտները: Խանդավան նպատակն էր ծանոթանալ ծառայություններին, այն աշխատանքներին, որ կատարվում է «Չեսու»-ի շրջանավարտները: Շատերը հանդես եկան վկայություններով՝ պատմելով այն իրաշալի գործերի մասին, որ Աստված անում է իրենց միջոցով Հայաստանի տարբեր մարզերում, Երևան քաղաքում և հարևան Վրաստանում: Բոլորն էլ կարևորեցին «Չեսու»-ի դերն ու նշանակությունը իրենց ծառայության համար: Դպրոցի տնօրեն Արտավազ Թադևոսյանը մեկ անգամ ևս հորդորեց, քաջալերեց շրջանավարտներին շարունակել գործել Տիրոջ համար, չհայել առկա դժվարություններին ու խնդիրներին, զինվել հավատ-



քով ու առաջ գնալ՝ առիթ հանդիսանալով բազում մարդկանց փրկության համար: Հիշեցնենք, որ 3 տարիների ընթացքում «Չեսու»-ն ավարտել են 100-ից ավելի մարդիկ, ովքեր ներկայացնում էին 17 տարբեր եկեղեցիներ:

Սիրուխուան նահանգում ավելի քան 1000 հոգանուց մուսուլմանների ամբոխը հարձակվել է տեղի երկու եկեղեցիների վրա, այրել դրանք, այնուհետև այրել նաև հովիվներից մեկի տունը: Բարեբախտաբար տուժածներ չկան, սակայն հարյուրավոր քրիստոնյաներ ստիպված են եղել փախչել իրենց տներից՝ խուսափելով հետագա արյունահեղությունից: Մուսուլմանների բարկության պատճառը եղել են հենց այդ երկու եկեղեցիների տարածքները, որոնք, ըստ վերջիններիս, քրիստոնյաներն իրավունք չունեն օգտագործել որպես եկեղեցի և հավաքվել այնտեղ:

Այս տարածքում սա առաջին միջադեպն է կողք կողքի ապրող քրիստոնյաների ու մուսուլմանների միջը: Մուսուլմանների վկայությամբ «իրենք հոգնել էին այդքան շատ հավատացյալներ տեսնելուց և այդքան հաճախակի աղոթքներից»: Փորձաքննությունից հետո Հյուսիսային Սումատրիի կառավարությունը որոշել է փոխհատուցել քրիստոնյաներին հասցված վնասը, որպեսզի վերջիններս կարողանան չեզոք գոտում վերականգնել իրենց հավաքատեղիները:



1000-ից ավելի քրիստոնյա ընտանիքներ փախել են Մոսուլից

Մոսուլի քաղաքում (ժամանակակից Նինվե քաղաքը) սկիզբ են առել բռնություններ՝ ուղղված քրիստոնյաների դեմ: Քաղաքը տեղակայված է Իրաքի հյուսիսում, որտեղից բռնությունների հետևանքով վերջին 10 օրում շուրջ 1000 քրիստոնյա ընտանիքներ են դիմել փախուստի: Մոսուլի կաթոլիկ արքեպիսկոպոս Բազիլ Ժորժ Կասմուսը հայտարարել է. «Մեզ՝ Իրաքի քրիստոնյաներիս համար, եկել են վատ ժամանակներ: հավատացյալները պայծառ ապագա չեն տեսնում: Նարնք չպետք է հանդուրժեն մուսուլմանների բռնություններն ու կամայականությունները: Այսպես եղավ երկու տարի առաջ, այսպես է նաև այսօր: Մենք ուզում ենք, որպեսզի քրիստոնյաները այստեղ ևս համարվեն հավասարազոր իրավունքներով մարդիկ, և օրենքը, կառավարությունը, ինչպես նաև հասարակությունը լինի պաշտպան Իրաքի բոլոր քաղաքացիների համար»:

Սիրելի՛ ընթերցող, փորձիր աղոթքիդ մեջ հիշել այն բոլոր քրիստոնյաներին, ովքեր այսօր ևս ենթարկվում են զանազան փորձությունների և նեղությունների: **Լինենք նրանց կողքին մեր աղոթքներով:**

Ներկայացրեց Արմեն Նիսադյանը

Բերտ Բլենդենենի վերջին ուղերձը. «Խոստովանությունը նախորդում է ապաշխարությանը»

Դեպի հավիտենություն հեռացավ հայտնի քարոզիչ, միջազգային «Քրիստոսի Դպրոցի» հիմնադիր Բերտ Բլենդենենը: Այսօր մենք հրապարակում ենք նրա վերջին դիմումը՝ ուղղված Եկեղեցուն:

Խոստովանությունը նախորդում է ապաշխարությանը - Ա Յովի. 1:9-10:

Ինչպես ձեզանից շատերին հայտնի է, տվյալ պահին ես անցնում եմ իմ ամբողջ կյանքի ամենադժվար շրջաններից մեկով, բայց, միևնույնն է, ես վստահ եմ, որ ամեն ինչի համար նպատակ կա:

Մի ժամանակ ես աղաչում էի Աստծուն, որ Նա ինձ թույլ չտա մահանալ, քանի դեռ ես չեմ հայտնել Նրա գործունեությունն այս խեղճ, խաբված աշխարհին: Ես զգում եմ, որ այս ամենն ինչ-որ ձևով փոխկապակցված է: Պատճառը, թե ինչու եմ ես սրանում այսքան համոզված, կայանում է նրանում, որ ես տեսնում եմ, թե ինչպես է իմ առողջության վրա տեղի ունեցող այս հարձակումը համաշխարհային աղոթաժողով առաջ բերել: Ամբողջ աշխարհի Եկեղեցիներից և անհատներից զանգեր են ստացվում, որ նրանք հիմա ծոմ են պահում, աղոթում են և կանգնում են հավատի մեջ՝ Աստծո վերջնական հաղթանակի համար: Ես անկեղծ հավատում եմ, որ այս աղոթքի ծառայությունը կարող է առաջացնել այն Աստծո վերջին շարժը, որի համար մենք այնքան նախանձավորությամբ աղոթում էինք:

Գտնվելով այս ֆիզիկական իրավիճակում՝ ես գիտակցում եմ, որ եթե Տերը հրաշք չգործի (որը ես հավատում եմ, որ աղոթքների շնորհիվ, այնուամենայնիվ, տեղի կունենա), սա իրոք կարող է լինել ձեզ ուղղված իմ վերջին ուղերձը: Այնպես որ, դուք կարող եք լրիվ համոզված լինել, որ ես մանրամասնորեն կշռադատում եմ այս պահին իմ կողմից գրվող յուրաքանչյուր բառը:

Ամենից առաջ Սուրբ Յովան ուժգին կերպով համոզում է ինձ, որ գալիք արթնության համար կարիք կա խորը խոստովանության և ապաշխարության ընտրյալների կողմից: Սուրբ Յովան Գետը պետք է հնարավորություն ունենա հոսելու մեր միջով: Դրա համար մեր մեջ չպետք է գտնվի մի բան, որը կարող է ընդդիմանալ Կյանքի Գետի հոսքին: Մենք պետք է խոնարհությամբ կանգնենք մեր Երկնային Յոր առջև և խնդրենք Նրա ներողամտությունն ու նախանձավորությամբ խնդրենք Նրան առաջնորդել և ուղղել մեզ:


Մենք գիտենք, որ Նրա Խոսքն ասում է. «Վայ նրան, ով չարին բարի է անվանում», բայց սա հենց այն է, ինչ մենք արել ենք՝ մեր պաշտամունքի մեջ մարմնին տեղ տալով: Մենք պետք է Աստծո առաջ խոստովանենք, որ մենք կորցրել ենք մեր հոգևոր հավասարակշռությունը և ապականել մեր հոգևոր արժեքները:

Մենք պետք է խոստովանենք, որ մենք կասկածի տակ ենք դրել Աստծո Խոսքի բացարձակ ճշմարտացիությունը՝ շատ ուրիշ կողմնակի բաներ քարոզելով:

Մենք հայտարարել ենք Խոսքի հանդեպ մեր սիրո մասին՝ միևնույն ժամանակ անտեսելով Այն: Մենք մեծամտորեն սեփականացրել ենք «Յովեզալստականներ» տիտղոսը՝ հայտարարելով, որ ավելի մեծ գործություն ունենք, քան բոլոր մյուսները, բայց միաժամանակ

բավարար գործություն չունենք կորսվածների վկայելու, էլ չենք խոսում սուրբ կյանք ապրելու մասին:

Մենք երկրպագել ենք ուրիշ աստվածների և անվանել ենք այն «Բարգավաճում»: Մենք ավելի շատ սովորել ենք կրոնական գերաստղերից հեռուտատությամբ, քան մենք սովորում ենք Առավոտյան Պայծառ Աստղից: Մենք



այսքարում ենք մեր փողոցներում տեղի ունեցող սանձարձակությունների դեմ, բայց միևնույն ժամանակ հրաժարվում ենք ընդունել, որ Աստծո Խոսքի մեր փոխգիշումներն են ծնել այդ սանձարձակությունները մեր փողոցներում (Յոն. 1:25-26): Ինքներս անխոս մնալով՝ մենք թույլ տվեցինք չարիքներին ապականություն գործել բեմի հետևում և ընտրատարածքներում, բայց և այնպես համարձակվում ենք ինքներս մեզ սրբություն անվանել: Բեմի հետևից մեր լռությամբ մենք սպանեցինք չծնվածներին: Մենք դավաճանեցինք մեր արժեքներին մեր կուսակցության, միության, մեր ժառանգած ավանդությունների կամ նախապաշարումների հանդեպ մեր հավատարմության պատճառով: Մենք մեղանչել ենք ռասիզմի մեջ մեր աններողամտության և վրիժառության ձգտումով: Մենք անտեսեցինք աղքատներին՝ ավելի հոգևոր նպատակներով զբաղված լինելու պատրվակով: Մենք ծուլորեն ենք պատրաստվում քարոզչությանը և բավարարվում ենք՝ օծությունը փոխարինելով աղմուկով (սրամտությամբ ու պերճախոսությամբ): Մենք անտեսում ենք մեր երեխաների դաստիարակությունը, իսկ հետո ամեն ինչում մեղադրում ենք սատանային: Մենք բողոքում ենք, որ դպրոցներում աղոթքը արգելել են, բայց միևնույն ժամանակ մեր եկեղեցու անդամների մեծամասնությունը իրենց սեփական տներում աղոթքի զուգահեռան չունեն: Մենք չարաշահել ենք մեր իշխանությունը՝ այն առաքյալություն անվանելով:

Մենք պատվում ենք մարդկանց մեջ հայտնի եղողներին և արհամարհում ենք անմշան մարդկանց, թեև նրանք ավելի սուրբ են: Մենք չենք բացում մեր բերանը սրբության քարոզչության համար՝ վախենալով, որ կդադարենք անհավատների համար զգացմունքային և հրապուրիչ լինելուց: Մենք դարձել ենք «օգտագործման համար հարմար»՝ դրա մասին բացահայտ չխոստովանելով: Մենք մերժել ենք անցյալը՝ որպես օրինապահություն և ընդունել ենք ժամանակակից եկեղեցու նորարարությունները: Մեր փառաբանության ծառայության մեջ մենք ավելի առաջնորդվում ենք «Քրիստոնեական

Երգերի Թոփ 40» հիթ-շքերթով, քան իրոք ներշնչված սաղմոսներով ու երգերով: Մեր սնափառությունը մեզ խորասուզել է խորը մթի մեջ՝ փակելով մեր աչքերը մեր անարդյունավետության և սովորել չցանկանալու հանդեպ: Իսկ մյուսներն էլ ինքնամոռաց տրվել են սեփական կրթվածությանը՝ մոռանալով գործնական կյանքի մասին: Մենք շատ արագ ենք ուրիշ խմբերի դատելու մեջ՝ մղված լինելով մեր երևակայական կատարելությունից, մեր անզուգական ավանդությունները գերադասելով անզուգական փոխհարաբերություններից: Մենք տեսադաշտից կորցրել ենք Աստծուն: Արդյունքում, մեծամասամբ մենք չենք գիտակցում տեղի ունեցող ավերման ընթացքի գոյությունը: Մենք չգիտենք դեպի իրականություն ետ դարձի ճանապարհը, քանի որ տեսադաշտից կորցրել ենք այն բարձունքները, որոնցից ընկել ենք: Մենք ընդունել ենք բարձր աղմուկը որպես զորություն, դերասանությունը՝ օժություն, իսկ տաղանդավորությունը՝ կանչվածություն: Մենք փոխարինել ենք մեղքի հանդիմանությունը խորհրդատվությամբ, իսկ մեղքը՝ հանդուրժողականությամբ: Մենք հեռացրել ենք դժոխքի իրականությունը Աստվածաշնչից, որպեսզի սիրելի լինենք այն մարդկանց կողմից, ում Աստված դատապարտում է: Մենք թղթի վրա գծագրել ենք երկրորդ գալուստի գծագիրը, բայց երբեք այն չենք քարոզում և չենք սպասում դրան: Մենք ուրախ-ուրախ գնում ենք մեր ճանապարհով՝ անցնելով կորսվածի կողքով. ամեն շաբաթ քարոզելով այն նույն մարդկանց, ովքեր արդեն լսել են: Մենք ստեղծել ենք այնպիսի մթնոլորտ, որտեղ մեզ ավելի հետաքրքրում է մեր սեփական կարիքների բավարարումը, քան համայնքի: Մեր հովիվների ուղեղի ծալքերը մակերեսային են. նրանք փորձում են այնպես անել, որպեսզի բոլորը գոհ մնան: Նրանց նվիրվածությունը Մեծ Հանձնարարականի հանդեպ չէ, այլ զուգարանների մաքրության, ընտրաթերթիկների հրատարակման ու տպավորիչ հրավիրյալ ընթրիքների կազմակերպմանը: Մենք ունենք երիտասարդ հովիվներ, որոնք իրենց դժգոհությունն են հայտնում

ուրիշների չարածի առիթով, սակայն ոչ մի խնդիր չունեն այն բանի վերաբերյալ, ինչ չեն արել հենց իրենք: Մենք ունենք հովիվներ, որոնք բավարարվում են առաջընթացի իսպառ բացակայությամբ, իրենք իրենց արդարացնելով, որ անում են այնքան, ինչքան գիտեն, միևնույն ժամանակ չունեն սովորելու ցանկություն: Չափից ավելի շատ մարդիկ են հիանում կրոնական հեռուստաստուդերով, որոնք վատնում են ձեր գումարները լիմուզինների, շքեղ տների և այլ ճոխությունների վրա, այն դեպքում, երբ ավետարանչության գործը տեղից չի շարժվում: Մեզ մոտ ավելի շատ դիրքի մասին երազող մարդիկ կան, քան կորած հոգիների համար հառաչող մարդիկ: Մենք գնացել ենք փոխգիշման և դա անվանում ենք հանդուրժողականություն: Մենք գնացել ենք անհնա-



զանդության, որը մենք ազատություն ենք անվանում: Մենք ցածրացել ենք մինչև սնահավատության աստիճան և այն հավատ ենք անվանում: Մենք փայփայում ենք կորցրած ժուժկալության անկարգապահությունը և այն անվանում ենք հանգիստ և լիցքաթափություն:

Մենք թեթևամիտ ենք դարձել աղոթքի հանդեպ և գայթակղվել ենք՝ ստիպելով մեզ հավատալ, որ այսպես մենք ազատվել ենք օրինապահությունից: Մենք գլորվել ենք մինչև անմաքրության և համոզել ենք ինքներս մեզ, որ ազատություն ենք ստացել: Անբավարարվածության պատճառով մենք իմաստության առկայությունը փոխարինել ենք անհոգությամբ՝ մտածելով, որ ռիսկի դիմելը (վտանգելը) ավելի լավ է, քան դրա իսպառ բացակայությունը: Մենք ունենք միսիոներներ, որոնք վերադառնալով ցույց են տալիս լուսանկարներ, որոնք ավելի շուտ նման են Ազգային Աշխարհագրական Միության ամսագրի լուսանկարների, քան միսիոներական դաշտերի: Դրանք բնության լուսանկարներ են, մայրամուտի գեղեցիկ տեսարաններ, բայց ոչ նվիրաբերման լուսանկարներ և ոչ էլ, հաստատ, նոր քրիստոնյաների: Հաճախ մենք դառնում ենք մարդիկ, որոնց ծրագրերը բոլորին դուր են գալիս, որոշումները բոլորի համար ընդունելի են, բոլորը հավանում են նրանց ծրագրերը և որոնց առաջընթացը ոչ ոքի համար տեսանելի չէ: Բարձր և ցածր մակարդակների վրա մենք ունենք առաջնորդներ, որոնք մի ժամանակ վառվող ջահեր էին Աստծո համար, իսկ հիմա լարվածությունը և հոգնածությունը թելադրում են նրանց իրենց օրակարգը: Այսօր մեր մեջ կան մարդիկ, որոնք թույլ են տվել պոռնոգրաֆիային խափա-

նել իրենց փոխհարաբերությունը Աստծո հետ, ընտանիքի հետ և եկեղեցու հետ: Օ՛, Աստված, օգնիր մեզ: Այսօր մեր երիտասարդությունը եկեղեցում խորասուզվել է սեռական մեղքերի մեջ, որովհետև նրանց մղումները գալիս են ավելի շուտ գեղձերից և հորմոններից, քան թե նրանց Աստծուց: Կան ծառայողներ, որոնց աչքերը գաղտագողի զննում են ինչ-որ մեկի հաճելի դեմքը կամ գեղեցիկ կառուցվածքը:

Վեադարձրու՛ մեզ նորից մաքուր սիրտ և անապական միտք ունենալուն: Սրտերի ապականությունը իրեն դրսևորում է սանձարձակ հարաբերությունների, մրցակցության կամ նախանձի մեջ: Ների՛ր մեզ այս ցավալի՛ մեղքերը: Փորձի՛ր մեզ, Տեր Աստված, և տես մեր սրտերն այսօր, փորձի՛ր մեզ և տես, արդյոք մենք անօրեն ճանապարհի մեջ ենք, մաքրի՛ր մեզ ամեն մեղքերից և ազատագրի՛ր մեզ: Մեր սրտերը թող նորից դեպի Քեզ դարձի գան և մեզ արժանացրու կոչվելու Քո սրբերն ու արժանանալու մասնակից լինել Քո արդարությանը: Ա Կորն. 11:24-26

**Թարգմանիչ՝
Էդուարդ Հարությունյան**

Սմիթ Ուիլյամս 1859-1947

«Աստված այնքան շատ է սիրում մեզ, և Նրա համար մենք այնքան ցանկալի ենք, որ Նա առաջարկում է հնարավորինս հեշտ պայման. «Միայն հավատա»։ Ս. Ուիլյամսը

Տիրոջ մեջ ունեցած մեծ հավատքի համար Սմիթ Ուիլյամսը փնտրում էին «հավատքի առաքյալ»։ Նա իր պատգամներում խոսում էր խոսքի զորության մասին..

Սմիթը ծնվել է Անգլիայի Յորկշայր քաղաքից քիչ հեռու գտնվող մի փոքրիկ գյուղում 1859թ.։ Փոքր տարիքից սկսած՝ նրա մոտ նկատվում էր ծարավ Աստծո նկատմամբ, թեև այդ ժամանակ նրա ծնողները Քրիստոնյա չէին։ Սակայն նրա տատիկը Քրիստոնյա էր և միշտ եկեղեցի գնալիս իր հետ էր տանում նաև Սմիթին։ Երբ Սմիթն ութ տարեկան էր, նա հավաքույթի ժամանակ միացավ երգող խմբին և այդ երգի ժամանակ նա պարզ հասկացավ, թե որն է վերստին ծնունդը, թե ինչ էր իր համար նշանակում Յիսուսի մահը և հարությունը, և նա դա ընդունեց իր ամբողջ սրտով։ Այդ օրվանից սկսած՝ նա երբեք էլ չկասկածեց, որ ինքը փրկված է։ Շուտով Սմիթը սկսեց գործել որպես ավետարանիչ, որը հետագայում դարձավ իր կյանքի կենտրոնացումը։ Եվ առաջինն, ով դարձի եկավ նրա ավետարանչության շնորհիվ, դա իր մայրն էր։ Թեև Սմիթը կարդալ չգիտեր, բայց միշտ իր հետ էր կրում Նոր Կտակարանը, ուր էլ որ գնար։ Երբ Սմիթը տասնութ տարեկան դարձավ, որոշեց ինքնուրույն ապրել և աշխատել։ Նա աշխատում էր որպես ջրմուղագործ և քսան տարեկանում տեղափոխվեց Լիվերպուլ՝ աշխատանք փնտրելու։ Այնտեղ նա սկսեց ծառայել քաղաքի երեխաների հետ։ Սոված և ցնցոտիներ հագած երեխաները հավաքվում էին նավահորոգարանի մոտ, որտեղ նա Ավետարանն էր քարոզում և ջանում էր հնարավորինս կերակրելու և շորեր գտնելու նրանց համար այն գումարով, ինչ ինքն էր վաստակում՝ այդ տարածքում ջրմուղագործ աշխատելով։ Նա նաև այցելում էր

հիվանդանոցները և աղոթքով ու ծոմապահությամբ խնդրում էր Աստծուն դարձի եկողների համար։ Նրա յուրաքանչյուր ծառայության ժամանակ ամենաքիչը հիսուն հոգի ապաշխարհում էր։

Երբ Սմիթը քսաներեք տարեկան էր, նա ամուսնացավ Պոլլիի հետ, և նրանք ունեցան հինգ երեխա։ Մինչև երեխաների լույս աշխարհ գալը Սմիթը և Պոլլին աղոթում էին նրանցից յուրաքանչյուրի համար, որպեսզի նրանք իրենց հետագա կյանքում հավատարմությամբ ծառայեին Աստծուն։

Սմիթը և Պոլլին ծառայում էին միասին։ Մեկ անգամ նրանք ներկա եղան մի հավաքույթի, որտեղ Աստված բժշկության բազում հրաշքներ գործեց, և Պոլլին, որ ուներ առողջական խնդիրներ, նույնպես բժշկվեց։ Դրանից հետո նրանց երկուսի սրտում բորբոքվեց այդ կրակը՝ աղոթելու Աստվածային բժշկության համար։ Երբ հավաքույթի ժամանակ Սմիթի աղոթքից հետո բժշկության հրաշքներ տեղի ունեցան, ոչ ոք այնքան չէր զարմացել, որքան որ հենց ինքը՝ Սմիթը։ Դրանից հետո նրանց եկեղեցին սկսեց ավելի աճել։

1907թ. Պենտեկոստը հասավ Սունդեռլանդ։ Սմիթը լսեց Սուրբ Յոզու մկրտության և այլ լեզուներով խոսելու մասին։ Նրա մոտ ցանկություն առաջացավ գնալու այնտեղ և մասնակցելու այդ հավաքույթներին։ Նրա համար աղոթք արեցին, սակայն նա այդ պահին չմկրտվեց Սուրբ Յոզով։ Բայց երբ նա դուրս եկավ, այդ պահին զգաց Սուրբ Յոզու կրակը և Սմիթը տեսիլքի մեջ տեսավ դատարկ խաչը և տեսավ Յիսուսին՝ փառավորված Յոր աջ կողմում։ Նա բացեց իր բերանը՝ փառավորելու Աստծուն, բայց նա սկսեց այլ լեզուներով։ Դրա-



նից հետո Սմիթի քարոզներն ավելի զորավոր դարձան։ Այս փորձառությունից հետո Սմիթը ձգտեց Աստծուն ավելի մոտենալ աղոթքի և ծոմապահության միջոցով։ Նա բոլոր իրեն դիմողներին արձագանքում էր, ովքեր խնդրում էին աղոթել բժշկության համար։ Երբեմն նա գնացքով գնում էր այլ քաղաք, այնուհետև վարձույթով հեծանիվ էր վերցնում, որպեսզի հեծանվով հասներ այդ անձնավորության բնակավայրը։ Շուտով նա թողեց ջրմուղագործի իր աշխատանքը և նվիրվեց միայն ծառայությանը։

1913թ.-ին, երբ Սմիթը կայարանում գնացքի էր սպասում՝ Շոտլանդիա մեկնելու համար, նրան լուր հայտնեցին, որ նրա կինը կաթվածահար է եղել։ Սմիթը շտապեց ետ վերադառնալ, սակայն Պոլլին արդեն մեռել էր։ Պոլլիի մահից հետո նրա նվիրվածությունը և հոգևոր զորությունը փոխանցվեցին Սմիթին և բազմապատկեցին նրա ծառայության արդյունավետությունը։ Սմիթը շարունակեց քարոզել Ավետարանը՝ շրջելով տարբեր քաղաքներ և գյուղեր, և նրա ուղերձն էր՝ «միայն հավատա»։ Նրա համոզմունքները երբեք չփոփոխվեցին հաջորդ չորս տասնամյակների ընթացքում, և նա

շարունակեց Աստծուն ծառայել հավատարմությամբ մինչև իր կյանքի վերջը:

1914թ.-ից սկսած՝ նա սկսեց նաև ծառայել այլ երկրներում: Բժշկությունները, մեռելների հարությունը, և այլ նշաններ ու հրաշքեր հետևում էին նրա ծառայությանը: Սմիթն ուներ անզիջում հավատք Աստծո խոսքի նկատմամբ, և Սուրբ Հոգին միշտ ներկա էր: 1922թ. Սմիթը ճանապարհորդեց Նոր Զելանդիա և Ավստրալիա և կարճ ամիսների ընթացքում հազարավոր մարդիկ փրկվեցին և մի քանի Հոգեգալստական

եկեղեցիներ ծնունդ առան այնտեղ:

1947թ.-ին՝ մեկ այլ ծառայողի հուղարկավորության ժամանակ, Սմիթը՝ երկխոսության պահին խոնարհեց իր գլուխը և նմշեց՝ առանց ցավի կամ պայքարի 87 տարեկան հասկում:

Սմիթը երբեք չի ձգտել կազմավորելու «իր հարանվանությունը» և չի գրել գրքեր, սակայն իր պարզ հավատքն այսօր էլ ազդեցիկ է Քրիստոնյաների շրջանակում:

Սմիթի ուղերձից մի հատված. «...Ձեր գլուխը և սիրտը լցրեք Աստծո խոսքով: Անզիբ արեք համարներ

Աստծո խոսքից... Այսպես անելով՝ դուք ձեր սրտերում սերմ եք ցանում, որին որ Աստծո Հոգին բողբոջել կտա... Ճանաչիր քո Գիրքը, ապրիր նրանով և հնազանդվիր նրան... Թաքցրու՝ Աստծո խոսքը քո սրտում... Այն կփրկի քո հոգին, կամրացնի քո մարմինը, կլուսավորի քո միտքը... Աստծո խոսքը ավարտուն է, վստահելի, արդի, և մենք պետք է կատարյալ հնազանդությամբ հետևենք նրան...»:

**Ներկայացրեց
Նելլի Սկրոչյանը**

**Այն մասին, թե
ՈՐՔԱՆ ԿԱՐԵՎՈՐ Է ՍԵՐԸ ԿՅԱՆՔՈՒՄ**

Շատ վաղուց կար մի կղզի, որտեղ ապրում էին բոլոր զգացմունքները և մարդկային հոգևոր արժեքները:

Ուրախությունը, Տխրությունը, Գիտությունը և այլուք: Նրանց մեջ էր նաև Սերը:

Մի օր զգացմունքները նկատեցին, որ կղզին խորտակվում է և իրենք շուտով կխեղդվեն ծովում:

Բոլորը նստեցին իրենց նավերը և լքեցին կղզին: Սերը չէր շտապում և սպասում էր մինչև վերջ: Եվ միայն այն ժամանակ, երբ նկատեց, որ կղզու փրկության համար ոչ մի ելք չկա, նա սկսեց օգնություն կանչել:

Կողքով անցնում էր Հարստության շքեղ նավը:

Սերը խնդրում էր իրեն վերցնել նավ, բայց Հարստությունն ասաց, որ նավում շատ թանկարժեք իրեր, ոսկի, արծաթ կա, և Սիրո համար տեղ չկա:

Սերը դիմեց նույն խնդրանքով Հպարտությանը, որը ևս անցնում էր կղզու մոտով: Բայց Սերը ի պատասխան լսեց, որ իր ներկայությունը կխախտի նավի կարգուկանոնն ու կատարելությունը:

Թախանձանքով Սերը դիմեց Տխրությանը: «Օ, Սեր,-ասաց Տխրությունը,-ես այնքան տխուր եմ, որ պետք է մենակ մնամ իմ տխրության մեջ»:

Անցնում էր նաև Ուրախությունը, բայց նա այնքան զբաղված էր զվարճանքով, որ անգամ չլսեց Սիրո խնդրվածքը:

Հանկարծ Սերը լսեց մի ձայն.

-Արի այստեղ, Սեր, ես քեզ ինձ հետ կվերցնեմ:

Սերը տեսավ մի ալեհեր ծերուկի: Նա այնքան երջանիկ էր, որ մոռացավ հարցնել նրա անունը: Երբ նրանք հասան Երկիր, Սերը մնաց, բայց ալեհերը շարունակեց ճանապարհը: Երբ ալեհերի նավը հեռացավ, Սերը սթափվեց. նա անգամ շնորհակալություն չէր հայտնել նրան:

Սերը հարցրեց Գիտությանը.

-Գիտություն, ասա՛ ով ինձ փրկեց:

-Ժամանակն էր,-պատասխանեց Գիտությունը:

-Ժամանակը, -զարմացավ Սերը,-իսկ ինչու՞ նա ինձ օգնեց:

Գիտությունը պատասխանեց.

-Միայն ժամանակն է հասկանում և գիտի, թե որքան կարևոր է Սերը կյանքում:



Իր ծնունդից մի օր առաջ երեխան հարցրեց Աստծուն.
-Ես չգիտեմ, թե ինչու եմ գնում Երկիր: Ի՞նչ պիտի անեմ:
Աստված պատասխանեց.
- Ես քեզ մի հրեշտակ կնվիրեմ, ով միշտ քեզ հետ կլինի: Նա ամեն ինչ քեզ կբացատրի:
- Բայց ինչպե՞ս ես նրան կհասկանամ, եթե չգիտեմ նրա լեզուն:
- Հրեշտակը քեզ կսովորեցնի իր լեզուն: Նա քեզ կպաշտպանի բոլոր դժվարություններից:
-Ե՞րբ և ինչպե՞ս ես կվերադառնամ Քեզ մոտ:
-Քո հրեշտակը քեզ ամեն ինչ կպատմի:
-Իսկ ինչ է իմ հրեշտակի անունը:
-Կարևոր չէ, թե ինչ է նրա անունը, նա շատ անուններ ունի: Դու նրան կանվանես «մայր»:

Հարցապրույզ

ԽԱՀԱՏՈՒՐ ՉՈՐԲԱՆՅԱՆԻ

հետ

Խաչատուր Չորանյան - մարդ, ով թողել է աշխարհի փառքն ու ճանաչումը՝ փոխարինելով այն Հիսուս Քրիստոսի սիրով, մարդ, ով ծառայում է Աստծուն իր սքանչելի ծայնով՝ ամենուր պատմելով նրա փառքն ու գովեստը

Ե՞րբ եք առաջին անգամ բեմ բարձրացել

Առաջին անգամ բեմ են բարձրացել Ռուսաստանում, որտեղ համերգ կազմակերպեցի: Այնտեղ հանդիպեցի շատ լավ երաժիշտ-մկագողների, սակայն չունեին երգիչներ, երգեր, և որոշեցինք հանդես գալ միասին: Արդյունքում շատ հետաքրքիր միջոցառում ստացվեց: Դա նոտավորապես 1994 թ.-ն էր:

Ինչպե՞ս որոշեցիք երգել միայն Քրիստոսի համար

Երբ սկսեցի երգել, մի քանի ավբոն թողարկեցի: Այդ ավբոններն արագ ճանաչում բերեցին ինձ, սակայն իմ նպատակը ոչ թե ճանաչում ձեռք բերելն էր, այլ դա արել էի որպես աշխատանք՝ ֆինանսի համար: Սակայն, եկավ ժամանակ, որ հասկացա՝ Աստված մարդու առաջ դրել է կոնկրետ ճանապարհ, ու միայն այդ ճանապարհով քայլելիս մարդը կլինի երջանիկ, հասկացա, որ ուղին միայն Քրիստոսն է և ես երջանիկ կլինեմ միայն նրա հետ: Սկզբում որոշում չէի կայացնում, քանի որ շատ դժվար է Ո՛չ ասել այն ամենին, ինչին հասել ես երկար աշխատանքների արդյունքում: Սակայն հետո հասկացա, որ Աստված ստեղծել է մարդուն՝ իրեն գովերգելու համար: Եվ եթե ես ցանկանում եմ հաճեցնել Աստծուն, պետք է ինձ նվիրեմ նրան գովերգելուն:

Աշխարհում միշտ ձգտել են լինել առաջինը, դասարանում ունեցել են վառ արտահայտված մանկություն և պատանեկություն, լինելով միշտ առաջինը, սիրված բոլորի կողմից, եկավ պահ, երբ ուզեցի երգել միայն Քրիստոսի համար: Իհարկե, դա չկատարվեց շատ հեշտուր-



յամբ: Եղավ պահ, որ աշխարհը նորից սկսեց քաշել, եղան գրավիչ առաջարկություններ, և շատ դժվար էր դիմադրել գայթակղությանը, բայց, ի վերջո, ես լուրջ որոշում կայացրի՝ հետևել միայն Քրիստոսին: Աստված ուզում էր մոտենալ ինձ : Ոչ հոգևոր երգեր երգելը մեղք չեմ համարում, քանի որ դա աշխատանք է, բայց ես հասկացա, որ Աստված ինձ համար ուրիշ օրհնություն, ուրիշ ճանապարհ է պատրաստել:

Ի՞նչ ծառայություններով է հանդես գալիս Խաչատուր Չորանյանը և որտե՞ղ

Առայժմ ծառայում եմ Հայաստանի և Ռուսաստանի Դաշնության տարածքում: Ունենում եմ հիմնականում ավետարանչական, համերգային ծառայություններ, թեև, այժմ հրավերներ կան նաև Եվրոպայից: Կան դժվարություններ, սակայն վստահ եմ, որ Աստված կլուծի ամեն հարց: Ձբաղվում եմ նաև երգերի ծառայությամբ, ինչպես նաև իմ տարածքում՝ Տաշիրի շրջանում, հանդես եմ գալիս հովվական ծառայությամբ:

Ըստ Ձեզ՝ ի՞նչ է փառաբանությունը

Ցանկացած պարագայի մեջ՝ անկախ նրանից, թե դու ինչ ես տեսնում, որևէ բանի կարիք ունես, թե ոչ, Աստծուն Այո՛ և Ամեն ասելն է փառաբանությունը: Այսինքն՝ քո կյանքի ցանկացած պարագայում, անկախ, թե ինչպիսին կլինեն հանգամանքները, քո առողջությունը, քո ֆինանսական դրությունը, քո գործերը, դու կարողանում ես Աստծուն փառաբանել այնպես, ինչպես Հորը հասկացավ, որ Աստված երբեք սխալ ու անարդար չի լինում:



Ի՞նչ կարևոր հատկանիշ կնշեք քրիստոնյայի կյանքում

Կարևոր հատկանիշները շատ են, բայց ամենակարևորը անկեղծությունն է Աստծո առաջ: Այդտեղից է սկսվում ամեն ինչ:

Ի՞նչ նոր ծրագրեր ունեք ապագայում, չէի՞ք ցանկանա հանդես գալ տեսահոլովակով

Տերն ասել է, որ ճանապարհ է բացելու դեպի հեռուստատեսություն. դա շատ պատասխանատու գործ կլինի, բայց վստահ եմ, որ Աստված կօրինի: Աղոթում եմ նաև տեսահոլովակի համար, որովհետև դա շատ խոսում թե՛նա է, և դրա օգնությամբ կարող ես խոսել մարդկանց սրտի հետ: Խանգարող բաներ շատ կան, բայց վստահ եմ, որ իր ժամանակին Աստված ամեն բան կիրագործի, մեզանից մնում է միայն հավատարմորեն ծառայել Աստծուն և սպասել:

Ի՞նչն է պատճառը, որ այսօր չունենք հոգևոր տեսահոլովակներ

Երևի դեռևս պահը չի հասունացել: Գիտեք, ամեն բան ունի իր հասունացման ժամանակը, թեև այսօր մեր իրականության մեջ կան մարդիկ, ովքեր ի գործ են գեղեցիկ տեսահոլովակներ ստեղծել, բայց, ինչպես նկատում ենք, դրա պակաս դեռևս շատ ունենք: Աղոթենք ու վստահ լինենք, որ ամեն բան ունի իր ժամանակը: Եվ կգա ժամանակ, որ կտեսնենք Աստծո օրհնությունները նաև այդ բնագավառում:

Ի՞նչ հետաքրքիր դեպք կհիշեք Ձեր ծառայություններից

Մի անգամ երգերով հանդես էի գալիս Ռուսաստանի հայ համայնքի համար: Կար մի երգ՝ «Եվս մեկ օր», որի երաժշտությունը, ցավոք, այդ պահին չունեի: Բայց հանդիսատեսը շատ էր սիրում այդ երգը և ցանկանում էին լսել այն: Որպեսզի չվշտացնեմ հանդիսատեսին, որոշեցի երաժշտության փոխարեն միացնել երգը և երգի հետ համատեղ կատարել այն: Սակայն, քանի որ



չունեի նմանօրինակ «փորձ», երգի երկրորդ քառատողում սխալվեցի. ժողովուրդը լսեց երգի բառերը, մինչդեռ բարձրախոսը դեռևս չէի մոտեցրել բերանիս: Շատ անոթալի էր ինձ համար, երբ բոլորը հասկացան, որ ինքս չեմ երգում, այլ, այսպես ասված, երգում եմ «ֆոնոգրամա»: Դրանից հետո լուրջ որոշում կայացրի՝ այլևս նման կերպով հանդես չգալ հանդիսատեսի առջև, որովհետև այդ դեպքից հետո ինձանից բավականին ջանք ու եռանդ պահանջվեց՝ իմ հանդիսատեսին վստահեցնելու համար իմ երգի իսկության մեջ:

Ի՞նչ կմաղթեք մեր ընթերցողին

Արթուն մնան, ընթերցեն ձեր «Սերմնացանը», փառք տան Աստծուն այս ծառայության համար, այն հրաշալի ծառայություն և միջոց է՝ միմյանց հետ հաղորդակցվելու համար: Ընթերցեք, աղոթեք և փառավորեք Տիրոջը: Աստված շատ օրհնի ձեզ:

**Հարցազրույցը վարեց՝
Արմեն Նիսյանը**

ՄԵԾՆ ԲԺՇԿԻ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ

Ամեն անգամ, երբ զգում եք, թե Աստված չի կարող Ձեզ գործածել, հիշեք՝

- Նոյը հարբած էր
- Աբրահամը ծեր էր
- Իսահակը երազկոտ էր
- Հակոբը խաբեբա էր
- Լիան տգեղ էր
- Հովսեփը խաբվել էր եղբայրներից
- Մովսեսը լավ չէր խոսում
- Գեդեոնը վախենում էր
- Սամսոնը կնամուլ էր
- Ռախաբը անառակ էր
- Եսային պիղծ շուրթեր ուներ
- Երեմիան ու Տիմոթեոսը երիտասարդ էին
- Հովնանը Աստուծոց էր փախչում
- Նոյեմին որբակյրի էր
- Պետրոսը Հիսուսին ուրացավ
- Աշակերտները աղոթքի ժամանակ քնեցին
- Ջաքեոսը կարճահասակ էր
- Պողոսը կրոնավոր էր
- Ղազարոսը մահացած էր

Մենք՝ որպես մարդիկ, միզուցե ունենանք շատ թերություններ, սակայն Աստված կարող է ամեն բան, պետք է միայն հանձնվել նրան և խոնարհվել նրա կամքի առջև: Համաձայնվեք գործածվել Աստծո կողմից, մի նայեք ձեր՝ միզուցե անկարող անձին, նայեք Աստծուն, որովհետև գործողը ոչ թե Դուք եք, այլ ամենակարող Աստված:

Եվ հիմա չկա ոչ մի արդարացում՝ Աստված կարող է գործածել Ձեզ անբողջությամբ:

Բացի այդ, Դուք հաղորդագրությունը չեք, այլ հաղորդագրությունը փոխանցողը: Աստծո սիրով լեցված՝ Աստված սպասում է, որ գործածի քո ողջ պոտենցիալը /ներուժը/:

Սա հասկացել էր նաև Պողոսը, երբ Սուրբ Հոգով առաջնորդվելով՝ գրում էր. «Ամեն բան կարող եմ ինձ գորացնող Քրիստոսով» Փիլ. 4:13

Երիտասարդ, քեզ համար...

Լինել ուժեղ, թե՞ զբաղվել ինքնախաբեությամբ

Սիրելի՛ երիտասարդ, ողջունում եմ քեզ Մեր Տեր ու Փրկիչ Հիսուս Քրիստոսի անունով: Այսուհետև կփորձենք երիտասարդներին վերաբերվող մեկ էջ հատկացնել «Սերմնացան»-ում:

Այս համարում կխոսենք Աստծո խոսքին համապատասխան ուշադրություն դարձնելու մասին: Եվ որպեսզի քեզ դուր գա այս էջը, կփորձեն լինել շատ անմիջական:

Մենք բոլորս գիտենք, թե որքան կարևոր է Աստվածաշունչ ընթերցելը քրիստոնյայի կյանքում: Շատ լավ գիտենք այն բոլոր Աստվածաշնչյան համարները, որոնք մեզ կոչ են անում Սուրբ Գիրք կարդալ, օրինակ՝ Հեսու 1:8, Սաղմոս 1, Բ Տիմ. 3:16, Կող. 3:16-17, Ա Պետրոս 2:2 և այլն: Սակայն թույլ տվեք մի հարց տալ բոլորիս. **արդյոք մենք համարժեք ուշադրություն դարձնում ենք այս համարների կատարմանը մեր կյանքում:** Կարծում եմ՝ շատերիս պատասխանը կլինի ՈՉ: Խնդրում եմ ճիշտ հասանալ ինձ, քանի որ ոչ թե տրամադրված եմ բացասական մտքերով, այլ հարցին մոտենում եմ շատ լուրջ և իրականությամբ նայելով: Սիրելի՛ս, եթե մենք գիտենք, որ սա շատ կարևոր է մեր կյանքի համար, ապա ո՞րն է պատճառը, որ չունենք համապատասխան վերաբերմունք Սուրբ Գրքի ընթերցանությանը: Ես չեմ խոսում այն մարդկանց մասին, ովքեր միայն «անունով» են քրիստոնյա: Մեր ազգում բոլորն են քրիստոնյա, բայց երբ խոսքը գնում է Աստվածաշունչ կարդալուն և, համապատասխանաբար, այդ խոսքով ապրելուն, ապա նրանք դառնում են շատ զբաղված և հեռատես, այսինքն՝ «հիմա չեն կարող, բայց հետագայում անպայման կկարդան»: Նրանք սուտ են ասում և ցանկություն էլ չունեն կարդալու. ուղղակի ամոթ է, քանի որ «անունով» քրիստոնյա են: Այդ իսկ պատճառով ամեն սուտ կարող են ճշմարտության տեղ ընդունել, որովհետև ինքնուրույն չեն ուսումնասիրում Աստվածաշունչը: Սուտը կարող է լինել մարդկային սովորությունների տեսքով, ուսուցումների տեսքով, բնավորության դրսևորման տեսքով և, իհարկե, կեղծ քրիստոնյաների տեսքով: Բայց ես գրում եմ քո մասին, որ վերստին ծնված ես, սակայն ինչ-ինչ պատճառներով այդքան էլ զոհ չես քո հոգևոր կյանքից: Արի անդրադառնանք վերոհիշյալ «Ժամանակ չունենալուն»: Մի խնդրանք ունեն քեզ. վերցրու թուղթ ու գրիչ և օրվա 24 ժամերը բաժանիր՝ ըստ քո զբաղվածության: Ես քեզ կփորձեմ օգնել՝ քո փոխարեն գրելով հնարավոր զբաղվածությունները, բայց խնդրում եմ ավելացնես բաց թողնվածները՝ կողքին գրելով նաև ժամերը: Խնդրում եմ անես դա հենց հիմա, որից հետո կշարունակես կարդալ: Օրվա պատկերը ունենալուց հետո նաև շաբաթվա կտրվածքով նույնը արա:

- Քնել
- հեռուստացույց դիտել
- դասեր
- ընկերների հետ ժամանակ անցկացնել
- ինտերնետ

- անձնական կարիքները հոգալ (ներառյալ տանից դուրս գալուն պատրաստվելը)
- հաց ուտել
- Աշխատանք
- Աղոթք
- Սուրբ Գրքի ընթերցանություն
- Հավաքույթների մասնակցություն
- այլ զբաղմունքներ:

Շնորհակալ եմ, որ հետևեցիր խորհրդիս: Իսկ այժմ, ըստ հերթականության, նշիր քո այսօրվա կյանքի համար առաջնային բաները և գործոնները, համեմատիր քո զբաղվածության հետ և տես՝ արդյոք ճիշտ ես տնտեսում քո ժամերը: Կարծում եմ՝ շատերս այժմ մի քիչ ամաչեցինք: Սիրելի՛ Աստծո զավակ, քաջալերում եմ քեզ չզբաղվել ինքնախաբեությամբ, այլ լինել անկեղծ Աստծո առջև: Եվ եթե տեսնում ես, որ դու հնարավորություն ունես ավելի ժամանակ տրամադրելու Սուրբ Գիրք ընթերցելուն և սերտելուն, ապա գործածիր այն կամքի ուժը, որ Աստված դրել է քո ներսում և հաղթահարիր ամեն արգելքները: Մի՞թե այսօր զանազան, արդեն անգամ «սեփական արտադրության» սերիալները և տարբեր անիմաստ, զվարճալի բաները ավելի կարևոր են, քան Ամենակարողի խոսքը իմանալը և Նրա խոսքով ապրելը: Լինում են պարագաներ, որ մենք չենք կարողանում հաղթել մեղքին և մարմնի ցանկությանը: Պարտությունը տեղի չունեցավ հենց այդ ժամանակ, այլ շատ օրեր առաջ, երբ դու ժամանակ չտրամադրեցիր՝ գորանալու Աստծո խոսքով: Չե՞ որ մեր հոգևոր ուժի աղբուրը Աստծո խոսքն է. **«Գրեցի ձեզ, երիտասարդներ, քանի որ դուք ուժեղ եք, և Աստծո խոսքը ձեր մեջ է բնակվում, ու դուք չարին հաղթեցիք» 1Դովհանու 2:14:** Ալելույա, տե՛ս, Նա՛ ամենակարող և ամենագետ Աստվածը, քեզ տեսնում է որպես ուժեղ երիտասարդ, և քո մեջ այնքան ուժ կա, որ դու կարող ես թույլ տալ, որ Աստծո խոսքը բնակվի քո մեջ և հաղթի չարին: Մի՛ ասա, թե չես կարող, հնարավորություն չունես, այլ սկսիր փորձարկել քո կյանքում և սկսիր քչից: Ամեն օր վերցրու Աստվածաշունչը և կարդա թեկուզ տասը թուղթ, մի քանի օր հետո այս թուղթերը ավելացրու և շարունակիր այսպես: Դրանից հետո վերցրու մի համար, որը չես հասկանում կամ ավելին ես ուզում իմանալ այդ խոսքի շուրջ, և սկսիր ուսումնասիրել՝ Աստվածաշունչում գտնելով նմանատիպ համարներ կամ նրան լրացնող խոսքեր, կիսվիր ուրիշների հետ, հարցրու նրանց, թե ինչպես են հասկացել այդ խոսքը: Եթե տեսնում ես, որ շատ զբաղված ես, ապա սկսիր քո որոշ զբաղվածությունները կրճատել ու այնտեղից ժամանակ վերցնել: Եվ սկսիր կանոնավոր կերպով սերտել Սուրբ Գիրքը, հատուկ ժամ ու ժամաչափ տրամադրիր: Հիշիր, ժամանակը անցնում է, դու կարող ես ապրել մի կյանք, որի համար ոչ թե կափսոսաս, այլ ընդհակառակը, հպարտ կլինես: Երիտասարդությունը ժամանակավոր է, այն հավետ չի տևում, բայց դու կարող ես այն հավերժացնել այն գիտությունով, որով կլցվես երիտասարդ շրջանում: Տերը քեզ շատ Օրհնի: Խնդրում եմ, եղիր ազատ և հարցերի դեպքում գրիր ինձ:

Հիշիր, դու ուժեղ ես Աստծո խոսքով:

Երիտասարդների առջնորդ Արտավազդ Թադևոսյան



ՀԱՐՅԱՍԵՐԻ ԱՆԿՅՈՒՆ

Ինչպե՞ս վերականգնել Աստծո հետ կորցրած ջերմ հաղորդակցությունը

Աստվածաշնչում կան դեպքեր, երբ Աստծո մարդիկ, որոնք, Աստծո հետ ունենալով ջերմ հաղորդակցություն, եկել է մի պահ, որ տարբեր պատճառներով կորցրել են Աստծո ներկայության քաղցր զգացողությունը: Այդպիսի օրինակներից է Սամսոնը, Դավիթը, Սավուղը, Սողոմոնը, Զուդա Իսկարիովտացին, Պետրոսը և այլն: Այս վերը նշված բոլոր մարդկանց մեջ կա մի նմանություն. նրանք ունեին Աստծո ներկայությունը իրենց կյանքում, որը բերում էր օծություն, հաջողություն, օրհնություն, հաղթություն...: Սակայն նրանց մեջ կա մի հատկանշական տարբերություն. նրանցից որոշները կամք արեցին վերականգնել իրենց կորցրած վաղեմի փոխհարաբերությունն Աստծո հետ, իսկ որոշները՝ ոչ: Նրանք տարբեր պատճառներով կորցրեցին իրենց հոգևոր հաղորդակցությունը, բայց վերականգնումը նույն ձևով կատարվեց. նրանք պարզապես ապաշխարեցին, այսինքն՝ զղջացին իրենց արածի համար, ընդունեցին իրենց մեղավոր լինելը տվյալ հարցում, դարձի եկան և շարունակեցին անել նախկին գործերը: Որպես օրինակ եկեք նայենք Դավիթի ապաշխարությունը, որ թեև թագավոր էր, բայց խանարիաբար ներողություն էր խնդրում երկնային Թագավորից:

Սաղմոս 51 - «Ողորմիր ինձ, ով Աստված, Քո ողորմության համեմատ, Քո առատ զթության համեմատ ջնջիր ինձ հանցանքներս»: Ուսանելի է նաև հիշել Տեր Հիսուսի խոսքերը՝ ուղղված Եփեսոս քաղաքի եկեղեցուն. Հայտնություն 2Գլուխ 4-5 խխ. - «Բայց քեզ դեմ մի բան ունեմ. քո առաջվա սերդ թողել ես: Հիշիր, թե որտեղից ընկար, ապաշխարիր և քո առաջվա գործերն արա՛»: Այսպիսով, Աստված մեզ խորհուրդ է տալիս վերհիշել, թե հատկապես ինչը պատճառ դարձավ մեր բաժանման համար. մե՞ղքը, ժամանակը ճիշտ չօգտագործե՞լը, եկեղեցուց կտրվե՞լը, փողի հանդեպ նպատակաւացությունը, հպարտությունը... Առաջին հերթին կարիք ունենք մեր մտքի հոգով՝ հիշողությամբ, հետ վերադառնալ այն նույն կետը, որտեղից սկսվեց մեր անկումը, և զղջումով խոստովանել մեր արածը (կամ չարածը, անհոգությունը...) և ներում խնդրել: Սրա լավագույն օրինակներից մեկը կարող է լինել Պետրոսի ապաշխարությունը, երբ նա երեք անգամ ուրացավ Տիրոջը. Ավետարան ըստ Մատթեոսի 26Գլ. 74-75խխ. - «Այն ժամանակ նա (Պետրոսը) սկսեց անիծել ու երդվել, թե՛ ա՛յն մարդուն չեմ ճանաչում, և անմիջապես աքաղաղը կանչեց: Եվ Պետրոսը հիշեց Հիսուսի այն խոսքը, որ ասել էր իրեն, թե՛ «Դեռ աքաղաղը չկանչած, երեք անգամ ինձ պիտի ուրանաս»: Եվ դուրս ելնելով՝ դառնապես լացեց»: Մեղքը պետք է իր անունով կոչել և չփորձել այն մեղմացնել կամ փափկացնել՝ համեմատելով այն մյուսների հետ կամ պատճառաբանություններ փնտրելով: Եվ եթե մեր ապաշխարությունն ու դարձը անկեղծ է, իհարկե, Աստված կլսի մեզ, կների մեզ և կնորոգի մեր կորցրած հարաբերությունն Իր հետ. **Ա 3Գլ-հաննես 2Գլ. 1-2խխ.** - «Իմ որդյակներ, այս բաները ձեզ գրում եմ, որ մեղք չգործեք, և եթե մեկը մեղք գործելու լինի, Հոր մոտ մենք բարեխոս ունենք՝ Հիսուս Քրիստոս արդարին: Նա մեր մեղքերի քավությունն է. ու ոչ միայն

մեր, այլ նաև՝ ամբողջ աշխարհի» : Թող Տերը օգնի ձեզ կատարելու ճիշտ որոշում:

Արդյո՞ք հոգևորի համար անհրաժեշտություն է ծառայությունը

Սուրբ Գիրքը եկեղեցին նմանեցնում է մարդկային մարմնի (եկեղեցին Քրիստոսի Մարմինն է), իսկ հոգևորներին՝ այդ մարմնի անդամների. **Ա Կորնթացի 12Գլ. 12խ.** - «Ինչպես մարմինը մեկ է և շատ անդամներ ունի, և այդ մեկ մարմնի բոլոր անդամները, շատ լինելով, մեկ մարմն են, այդպես է նաև Քրիստոս»: Այսպիսով, ամեն մի վերստին ծնված քրիստոնյա, ըստ Սուրբ Գրքի, մի անդամ է Քրիստոսի մարմնում: Իհարկե, Քրիստոսի մարմինն առողջ է, իսկ առողջ մարմնի հատկություններից մեկն էլ այն է, որ նրա մաս կազմող բոլոր անդամները գործող են, կենդանի և ունեն իրենց յուրահատուկ գործը: Բոլոր անդամների այս համերաշխ, նվիրված, անշահախանդիր կենսագործունեության հետևանքով է, որ մարմինը մնում է կենդանի և առողջ, այսինքն՝ երբ բոլոր քրիստոնյաները, ունենալով Աստծուց տրված բազում պարգևներ և տաղանդներ, գործածում են իրենց կարողությունները ընդհանուր օգուտի նպատակով, Սուրբ Հոգին գործածում է մեզ միմյանց կառուցելու համար:



Եփեսացի 4Գլ. 15-16խխ. «Այլ սիրով ճշմարտությունը խոսելով, ամեն բանում աճեք Նրա մեջ, որ Գլուխն է, այսինքն՝ Քրիստոսի, Ումից բոլոր մարմինը, հողերի միջոցով միացած և միահյուսված, յուրաքանչյուր մասի ներգործուն աշխատանքի չափով, աճում է և կառուցվում սիրո մեջ» : Փաստ է, որ եթե մի լիճ միայն անընդհատ վերցնի և չտա, (այսինքն՝ նրանից գետ դուրս չգա), այդպիսի լիճը դատապարտված է ճահճանալու և չորանալու: Այդպես էլ քրիստոնյան, լինելով մարմնի՝ եկեղեցու անդամ, եթե մտածի, որ ինքը եկեղեցու մեջ ոչ մի ծառայություն անելու կարիք, պարտականություն կամ կարողություն չունի, այդպիսի անդամը դատապարտված է հոգևոր տկարության և չի կարող լավ աճել: Կարծում եմ՝ տեղին է նաև հիշել Տիրոջ պատմած առակը տաղանդների մասին, երբ ծառաներից մեկը Տիրոջ կողմից շատ խիստ քննադատության, անգամ դատապարտության արժանացավ, երբ պարզվեց, որ նա, Տիրոջից կյանք և շնորհ ստանալով, չէր գործածել դրանք, այլ խնամքով պահելով, բերել էր դրանք ետ վերադարձնելու Տիրոջը: Այս պատմությունը գրված է Մատթեոս 25Գլ. 14-30 խխ.-ում: Այդ պատմության մեջ, երբ ծառան ետ է վերադարձնում իր պահած տաղանդը Տիրոջը, Նա այսպես է պատասխանում. **«Չար և ծույլ ծառա... վերցրեք դրանից տաղանդը և տվեք տաս տաղանդ ունեցողին... իսկ այդ անպիտան ծառային հանեցե՛ք դրսի խավարը, այնտեղ կլինի լաց և ատամների կրճտյուն»** : Այսբանն իմանալուց հետո, կարծում եմ՝ խելամիտ կլինի, փոխարենը մտածելու, թե ինչպես թաքնվել եկեղեցում, որպեսզի չծառայես, որի հիմնական պատճառը կամ ծուլությունն է, կամ մարդկային անոթը (որոնցից ոչ մեկն էլ գովելի չեն), ավելի լավ կլինի աղոթել «Հունձքի Տիրոջը» ինչ-որ հատուկ մի ծառայություն տալ քեզ, որպեսզի վերջին օրը բաց ճակատով և համարձակությամբ ներկայանաս Տիրոջը, որին ծառայում ենք:

Հարցերին պատասխանեց Էդուարդ Հարությունյանը

ՈՐՈՄՆԵՐԻ ԱՌԱԿԸ



Մարդիկ, երբ կարևոր բան պետք է հայտնեն, և ուզում են, որ դիմացինը հասկանա, գործածում են առակներ, պատկերավոր նկարագրություններ և պատմություններ: Աստվածաշնչում նմանատիպ բազում նկարագրություններ կան: Հիսուսը ևս խոսում էր առակներով: Օրինակ, երբ Հիսուսը ցանկանում էր Երկնային Թագավորության կարևորությունը շեշտել, պատմեց գանձերի առակը. «Դարձյալ նման է երկնքի արքայությունը մի արտի մեջ թաքնված գանձի, որ մի մարդ գտնելով թաքցնում և ուրախությունից գնում է, ամեն ինչ որ ունի ծախում է և արտը առնում (Մատթ. 13:44)»:

Հիսուս Քրիստոս, երբ սկսեց իր երկրային գործունեությունը, ասում էր. «Ապաշխարեցեք, որովհետև Երկնքի արքայությունը մոտեցել է»: Սակայն շատերը չէին հասկանում, թե ինչի մասին է խոսքը, քանի որ այդ ժամանակ հրեա ժողովուրդը, ըստ մարգարեությունների, սպասում էր Աստծո խոստմանը՝ Փրկչի գալստյանը, այսինքն՝ Քրիստոսին, որ պիտի գար, աշխարհը փրկեր և ազատեր հրեա ժողովրդին հռոմեացիների գերությունից, հաստատեր նոր թագավորություն: Ուստի նա հայտնի պատմություններով էր խոսում: Երբ աշակերտները հարցնում են՝ ինչու՞ ես առակներով խոսում, պատասխանում է. «Որովհետև թանձրացավ այս ժողովրդի սիրտը, և իրենց ականջներովը ծանր լսեցին, և իրենց աչքերը խփեցին, միգուցե աչքերով տեսնեն, ականջներով լսեն և սրտով իմանան, և ետ դառնան, և ես նրանց կբժշկեմ (Մատթ. 13:15)»:

Այնուհետև նա պատմում է որոմների առակը. «Երկնքի արքայությունը նմանվեցավ մի մարդու, որ իր արտում բարի սերմ ցանեց: Եվ մարդիկ քնելիս, նրա թշնամին եկավ, ցորենի մեջ որոմներ ցանեց ու հեռացավ: Եվ երբ որ խոտը բուսավ և պտուղ տվավ, այն ժամանակ որոմներն էլ երևացին: Եվ տան տիրոջ ծառաներն էլ մոտ գալով ասացին նրան. «Տե՛ր, մի՞ թե դու քո արտում բարի սերմ չցանեցիր, ապա որտեղի՞ց են որոմները»: Նա էլ պատասխանեց. «Թշնամի մարդ է դա արել»: Ծառաներն էլ ասացին տիրոջը. «Հիմա կամենու՞մ ես, որ գնանք քաղենք նրանց, դուրս հանենք»: Նա էլ ասաց. «Ոչ, միգուցե որոմները քաղելիս ցորենն էլ

նրա հետ պոկեք: Թող տվեք, որ երկուսը միասին մեծանան մինչև հունձքը, և հնձի ժամանակ հնձողներին կասեմ՝ առաջ որոմները քաղեցեք և նրանց խորձ-խորձ կապեցեք այրելու համար, իսկ ցորենը ժողովեցեք իմ ամբարի մեջ»:

Հիսուսի աշակերտները եկան իր մոտ և ասացին՝ մեկնիր մեզ արտի որոմների առակը: Նա էլ պատասխան տվեց և ասաց. «Բարի սերմ ցանողը Մարդի Որդին է: Եվ արտը աշխարհքս է, և բարի սերմը նրանք են, որ արքայության արդիք են, իսկ որոմները չարի որդիք են: Եվ թշնամին, որ նրանց սերմեց, սատանան է, և հունձքը աշխարհի վերջն է, և հնձողները հրեշտակներն են: Արդ ինչպես որոմներն են հավաքում և այրում, այնպես կլինի նաև աշխարհքի վերջումը: մարդի Որդին կուղարկի իր հրեշտակներին, և նրա արքայությունիցը կհավաքեն բոլոր գայթակղությունները և անօրենություն գործողներին, և կզցեն նրանց կրակի փռան մեջ. այնտեղ կլինի լացը և ատամների կռճոտոցը: Այն ժամանակ արդարները կծագեն ինչպես արեգակ Հոր արքայության մեջ: Ով որ լսելու ականջ ունի, թող լսի»:

Սիրելի՛ ընթերցող, ինչպիսի՞ն է քո արձագանքը Հիսուսի խոսքերին, արդյոք այն ընդունելի՞ է, թե՞ տարօրինակ և մերժելի, խնդրում եմ, քննիր, դրանից է կախված, թե որտեղ կանցկացնես հավիտենությունը:

Վարդան Թաղևադյան
«Նոր Կյանք»
կազմակերպության գործիչ

ՄԵՐ ՇՆՈՐՀԱԼԻՆԵՐԸ

Իմ կյանքի իմաստ

Ախ, ես չեմ կարող ապրել առանց քեզ,
Իմ կյանքի՛ իմաստ, ի՛մ լույս, ի՛մ Աստված,
Քո շնորհիվ, Սուրբ Տեր, ծնվեցի նորից,
Ու հագան կյանքիս օրերը բոլոր
զգեստները գարունքի:
Ու սիրտս լցվեց սիրով, ծաղկունքով,
խինդով բերկրանքի,
Ու սիրտս ցնծաց ու ասաց քեզ՝ Տե՛ր,
Ես հարուստ եմ, ես դարդ չունեմ,

Անհոգ եմ ես, էլ հոգս չունեմ,
Ես անվախ եմ, էլ վախ չունեմ,
Ա՛խ, առանց Քեզ ես կյանք չունեմ:
Ինչ-որ ունեմ, քո շնորհիվ է,
Շնորհակալ եմ, որ քեզ ունեմ:
Սիրում եմ քեզ,
պաշտում եմ քեզ,
Իմ քաղցր, հզոր,
տիեզերքի Տեր:

Մատիկյան
Քրիստինե



«Ուրեմն գնացեք, աշակերտներ դարձրեք բոլոր ազգերին...»: Մաթ.28:19

Հիսուս ասել է դա շուրջ 2000 տարի առաջ: Որտե՞ղ ենք մենք կանգ առել այսօր:

Այսօր աշխարհում հաշվվում են 16 352 մարդկային խմբեր, որից քրիստոնեության համար անհասանելի են դեռևս 6 650 խմբերը, %-ային չափանիշով անհասանելի են խմբերի 40.7%-ը:


Թուի 10 անհասանելի մարկանց խմբեր

- 1.Աիմաք, Թաիմանի - Աֆղանստան
- 2.Կոմորիան, Նոբվանի
- 3.Գարբե
- 4.Փաշայի, Հարավ - արևմուտք
- 5.Արաբ, Եմեն
- 6.Ազերի, Թուրք - Ադրբեջան,
- 7.Հազարա
- 8.Պաշտուն, Հարավային, Աֆղան.
- 9.Սանանի, Հյուսիսային Յեմեն
- 10.Բալոք, Արևելք



Եկ ծանոթանանք տասնյակում առաջին տեղը զբաղեցրած՝

Աֆղանստանի Իսլամական Հանրապետություն



Մայրաքաղաք Քաբուլ՝ ամենամեծ քաղաքը Նախագահական կառավարություն Ընդհանուր տարածքը՝ 652,090կմ² Բնակչությունը՝ 28 150 000

Աֆղանստան անունը նշանակում է «Աֆղանների երկիր» Աֆղան բառից:

Առաջին մասը բառի «Աֆղան» Պաշտունների երկրորդ անունն է, ովքեր հիմնադիրներն էին եւ ամենամեծ էթնիկ խումբը երկրում: Աֆղան բառը նշանակում է «գոռոց, անհասկանալի խոսք»: Պաշտունների լեզուն անհասկանալի էր պարսկաբնակներից, եւ նրանց համար դա պարզապես անհասկանալի բղավոցի էր նման: Բայց կա մեկ այլ տարբերակ եւս, որ աֆղան նշանակում է «փախստական»: Եվ իրականում էլ, Աֆղանստանը դժվար հասանելի տարածք էր ու շատ հարմար էր որպես թաքստոց Կենտրոնական Ասիայի տարբեր ցեղախմբերի համար, ովքեր ինչ-ինչ պայմաններից դրդված ցանկանում էին պահել իրենց անկախությունը: «Ստան» վերջավորությունը պարսկերեն նշանակում է «երկիր»: Աֆղան բառը առաջին անգամ նշվեց պատմության մեջ 982թ. :

Սահմանակցում է Իրանին արեւմուտքում, Պակիստան՝ հարավ-աւելքում, Թուրքմենստան, Ուզբեկստան եւ Տաջիկստան՝ հյուսիսում եւ Հինաստան՝ հյուսիս-արևելքում:

Նրա աշխարհագրական դիրքը կապում է Արեւելքն ու Արեւմտյան կամ Կենտրոնական Ասիան:

Բնակչությունը բաժանված է տարբեր էթնիկ խմբերի.

- 42% Պաշտուն
- 27% Տաջիկ
- 9% Հազարա
- 9 % Ուզբեկ
- 4 % Աիմաք
- 3 % Թուրքմեն
- 2 % Բալոք
- 4 % Տարբեր

Ամենատարածված լեզուներն են՝ Դարի կամ Արեւելյան Պարսկերեն 50% ու Պաշտո 35%: Երկուսն էլ Հնդեվրոպական լեզուներ են, նաեւ 11% Ուզբեկ ու Թուրքմեն, եւ 4% Բալոքի , Փաշայի:

99% մուսուլման են, 1%՝ քրիստոնյա, մուսուլմանների մոտավորապես 74-80% Սունի են, իսկ 19-25% Շիա:

Կրոնի հիմնադիրն է Մուհամեդ մարգարեն 7-րդ դարում: Իսլամը ամենաերիտասարդ կրոնն է՝ քրիստոնեությունից եւ հուդիզմից հետո: 1990թ. կար մոտավորապես 935մլն մուսուլման: Իսլամը հիմնականում տարածված է Ասիայում՝ ներառելով Ինդոնեզիան, որն ունի աշխարհում ամենաշատ մուսուլմանական բնակչությունը:

Իսլամի կորիզը Խորանն է: Մուսուլմանները հավատում են վերջնական պարգևատրմանն ու պատժին եւ Իսլամական ազգերի մեկությանը: Նրանք ունեն հինգ հիմնական պատվերներ-պահանջ. 2կա ոչ մի այլ աստված, բացի աստծուց, եւ Մուհամեդը հանդիսանում է աստծո սուրհանդակը: Օրական հինգ անգամյա ծիսական աղոթք (արևածագից - մայրամուտ). ողորմության ներկայացում, որը հայտնի է որպես կրոնական հարկ: Ուխտագնացություն դեպի Մեքքա: Եվ տարեկան կատարվող ուխտագնացություն, որը կապում է Իսլամը եւ նրա հետեւողներին ամբողջ աշխարհով մեկ:

Սիրելի՛ ընթերցող, խնդրում ենք աղոթքների մեջ հիշել այս պետությունը, որպեսզի այնտեղ եւ ծագի Աստծո ճշմարիտ լույսը եւ մարդիկ ճանաչեն միակ եւ իրական Աստծուն:

Ներկայացրեց Ռիմիկ Դալլաքյանը

ՄԱՅՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ՇՆՈՐՀ

Մայրությունը բարդ ֆենոմեն է՝ բարդ ֆիզիոլոգիական մեխանիզմով, մշակութային ու ինդիվիդուալ առանձնահատկություններով: Ամեն մի մշակույթի մեջ կա մի ամբողջ մայրության ինստիտուտ, որն իր մեջ ներառում է՝ կնոջ մեջ դաստիարակել մայրական որակներ: Հասարակական գիտակցության մեջ մայրական ոչ բոլոր ֆունկցիաներն են ամբողջովին հասկանալի. մի մասը հենված է հավատքի, առարկայի, սնապաշտության վրա:

Այժմ մի փոքր կանդորադառնանք կնոջ կյանքում ընթացող «հեղափոխական» մի փուլի՝ հղիությանը: Հղիությունը կնոջ համար մի ուրույն շրջան է իր կյանքի ընթացքում: Կինը այդ ընթացքում իրեն զգում է առավել երջանիկ, կենսուրախ. չէ՞ որ իր մեջ զարգանում է մի նոր սաղմ, որ նոր կյանքի սկիզբ է ազդարարելու: Եվ որպեսզի նոր կյանք ներխուժող փոքրիկը լինի առողջ և ֆիզիկապես, և՛ հոգեպես, մայրը նրան պետք է ապահովի հարմարավետ պայմաններ, հրաժարվի մի շարք սովորություններից, ապրի դրական հույզեր, ունենա ուրախ և կայուն տրամադրություն, առողջ դատողություն, շրջապատված լինի ցանկալի մարդկանցով, հաճախակի զրույցի բռնվի իր մեջ զարգացող փոքրիկի հետ, ժամանակ անցկացնի բնության գրկում, լսի լավ երաժշտություն, հնարավորինս խուսափի անցանկալի իրավիճակներից:

Երեխայի ֆիզիկական ու հոգևոր գոյությունը կախված է մորից, և երեխան դա զգում է: Երեխայի վերաբերմունքը իր և աշխարհի նկատմամբ /սեր կամ ատելություն/ պայմանավորված է այդ վաղ տարիքի հարաբերությունների փորձով: Երեխան մեծանալով՝ ընդհանրացնում է իր բոլոր դիրքորոշումները և հարաբերությունները մոր և հոր նկատմամբ: Սոր խնամքը վաղ հասակում թե՛ տղաների, թե՛ աղջիկների մոտ առաջացնում է որոշակի գիտակցական և անգիտակցական դիրքորոշումներ կնոջ և տղամարդու նկատմամբ: Կնոջից ընկալում են ինքնզոհության ու հոգատարության դրսևորումներ: Սոր դերը մայր-երեխա փոխհարաբերություններում առանձնակի է կարևորվում հետագա զարգացման համար: Մայրը մի կողմից պետք է ապահովի բարենպաստ խնամքի պայմաններ երեխայի համար, մյուս կողմից՝ իմանա՝ ե՞րբ և ինչպե՞ս կարող է թույլ տալ երեխային անջատվել իրենից: Երեխայի զարգացման ընթացքում մայրը պետք է զգայունակ լինի. երեխան ինչին կարող է դիմանալ և ինչին դեռ պատրաստ չէ: Փաստորեն «լավ մայրության» մեջ կարևոր է ոչ միայն հոգատարությունը և երեխայի խնամքը, այլև երբ անհրաժեշտ է, երեխայի վերահսկումը թուլացնելու ընդունակությունը: «Լավ մայրության» հիմքում ընկած է «մայրական էմպաթիան», որն առաջանում է երեխայի հետ լիարժեք նույնականացումից: Երեխայի համար մոր հետ փոխհարաբերությունները նրա առաջին սոցիալակն փորձն է: Չնայած մոր համար մայր-երեխա փոխհարաբերությունները չեն ընդգրկում որևէ այլ անձնավորություն, բայց մայրը բացի երեխայից ունի շփման այլ շրջանակ ևս. մոր դերը ձևավորվում է նաև իր վերաբեր-



մունքով ամուսնու նկատմամբ:

Առաջին հայացքից շատ գրավիչ է հնչում «մայրություն» բառը: Այո՛, անկասկած, դա այդպես է: Սակայն այն ենթադրում է մի շարք ֆունկցիաներ, որոնք ցանկացած կին պետք է սիրով ստանձնի: Հարկ է նշել, որ դրանք իրենց բնությամբ երբեմն բարդ են լինում: Սակայն հոգևոր և Աստծուն վստահող կնոջ կյանքում կա մի մեծ և հիանալի Օգնական: Ի՞նչ է պահանջվում հեզկոր կնոջից՝ անդադար աղոթել իր փոքրիկի համար, ընդ որում, այդ աղոթքները պիտի շարունակվեն երեխայի աճին զուգընթաց: Այսպիսով, Հիսուսի հետ բոլոր դժվարությունները բեռ չեն դառնում:

Սիրելի՛ կանյաք, աղջիկներ, մայրեր, շնորհավորում ենք Ձեզ այս հրաշալի ու գեղեցիկ տոնի առթիվ: Թող մայրության զգացողությունը միշտ թարմության շունչ տարածի Ձեր բոլոր օրերի մեջ: Սիրեք Ձեր զավակներին ավելի ուժգին, քան սիրում եք և կարող եք: Չէ՞ որ նրանք Աստծուց Ձեզ վստահված թանկարժեք գանձեր են, իսկ գանձերը պետք է խնամքով պահել:

Որպես վերջաբան՝ նվիրում ենք աստվածաշնչյան մի հերոսուհու խոսքերից: Կին, որ այդքան ուժգին էր տենչում մայրանալ և որի նվիրական երազանքը իրականություն դարձրեց Աստված. **«Ոհ, Տեր իմ, Քո անձը կենդանի է. ես այն կինն եմ, որ Քու քույր կայնեցա Տիրոջը աղոթք ընելու համար: Ես այս տղուն համար աղոթք ըրի ու Տերը իմ խնդրվածքս ինձի տվավ, ինչ որ անհկա խնդրեցի: Հիմա ալ զանհկա Տիրոջը կնվիրեմ. անհկա իր բոլոր կյանքին մեջ Տիրոջը փոխ տրված ըլլա»** /Ա Թագ. 1:26-28/:

Արուսիկ Բալայան

ՄՊՈՐՏԸ՝ քրիստոնյայի աչքերով

ՄՊՈՐՏԸ՝ քրիստոնյայի աչքերով XՓԱ - ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՖՈՒՏԲՈԼԱՅԻՆ ԼԻԳԱ



ՔՖԼ-ի մրցանակաբաշխություն

Ամբողջ աշխարհում է հայտնի «Երիտասարդները՝ Քրիստոսի համար» կազմակերպությունը: Վերջերս այն իր գործունեությունն է սկսել նաև Հայաստանում: Կազմակերպությունն Ուկրաինայում հասել է զգալի հաջողությունների և մեծ ճանաչում է ձեռք բերել: Կազմակերպության գործունեության ոլորտներից մեկը սպորտն է, հատկապես՝ ֆուտբոլը: Քչերը կարող են անգամ պատկերացնել, որ Ուկրաինայում Քրիստոնեական Ֆուտբոլային լիգան ունի մեծ ճանաչում, իր մեջ ընդգրկում է ավելի քան 120 թիմ և ունի պետական ընդունում: Անգամ կազմակերպված մրցանակաբաշխություններին կարող են մասնակցել այնպիսի անձինք, ինչպիսիք են Ուկրաինայի Ֆուտբոլի Ֆեդերացիայի նախագահը, հայտնի սպորտսմեններ, կառավարության անդամներ: Սկսելով ընդամենը մի քանի թիմային խաղերից՝ լիգան հասավ մեծ արդյուքների: Այժմ այնտեղ խաղում են ինչպես եկեղեցական, այնպես էլ ոչ եկեղեցական թիմեր: Բնականաբար, գեղեցիկ ու հաճելի խաղից բացի լիգան ունի մեկ գլխավոր նպատակ. աշխարհին պատմել Քրիստոսի սիրո մասին, ցույց տալ ճշմարիտ ուղին և առաջնորդել մարդկանց փրկության: **«Սիրիի ընկերոջդ քո անձի պես» Սարկ. 10:27** - Սա է լիգայի կարգախոսը: Դեմ կանգնելով աշխարհում ընդունված կարգերին ու սովորություններին՝ այն հորդորում է յուրաքանչյուր երիտասարդի սիրել ու հարգել դիմացինին, վարել

առողջ ապրելակերպ և ճանաչել Քրիստոսին:

Քրիստոնեական Ֆուտբոլային Լիգայի նպատակը.

1. Ժամանակակից երիտասարդին ծանոթացնել Քրիստոսի կյանքին և պատգամին:
2. Քրիստոնեական եկեղեցուն հնարավորություն տալ մրցաշրջանի օգնությամբ ավետարանի բարի լուրը տարածել,
3. Ավելի զարգացնել կապն ու հաղորդակցությունը եկեղեցիների և հարանվանությունների միջև,
4. Աշխարհին ցույց տալ քրիստոնեական էթիկայի և հոգեբանության կարևորությունը,
5. Ժամանակակից երիտասարդին «ինքնառեալիզացիայի» հնարավորություն տալ,
6. Վարել առողջ ապրելակերպ,
7. Օգնել երիտասարդներին սպորտում հասնել զգալի հաջողությունների:



ՔՖԼ-ի առաջնություն

Համաձայնեք, որ շատ հաճելի և իրական նպատակ է դրված Լիգայի առջև: Ինչևէ, փաստը ցույց է տալիս, որ աշխարհը դրա կարիքն ունի, այժմ նմանատիպ Լիգաներ կան տասնյակից ավելի քաղաքներում, և ամենուրեք այն անց է կացվում բարձր մակարդակով՝ ընդունվելով և սիրվելով ամենքի կողմից: Հետաքրքիր պայման է նաև այն, որ խաղի ընթացքում, դրան նախապատրաստվելու, ինչպես նաև մարզումների ժամանակ որևէ մասնակից չպետք է ալկոհոլ կամ ծխախոտ օգտագործի, պետք է ներկա լինի աստվածաշնչյան կարճատև ուսուցումներին (5-15 րոպե), վիճաբանության պատճառ չհանդիսանա, ինչպես նաև չհայիոյի: Պայմաններից մեկի խախտման դեպքում ամբողջ թիմը հրաժեշտ է տալիս Լիգային:



ՔՖԼ-ի մրցանակաբաշխություն

*Ներկայացրեց՝
Արմեն Նիսանյան*

Սիրելի՛ բարեկամ, «Վերնատուն» եկեղեցին սրտանց հրավիրում է Ձեզ մասնակցելու հավաքությունների, որտեղ կարող եք բարձրացնել Ձեզ հուզող հարցերը, լսել Աստծո հտուք, ունկնդրել գեղեցիկ հոգևոր երգեր: Բոլորին հրավիրում ենք յուրաքանչյուր շաբաթ օր` ժամը 18.00-ին, ներկա գտնվելու նորերի հավատությամբ, մանուկներին` յուրաքանչյուր կիրակի` ժամը 11.00-ին, իսկ պատանիները կարող են այցելել մեզ ամեն կիրակի` ժամը 13.00-ին: Կիրակնօրյա ընդհանուր ժողով` ժամը 10.00-ին:

Սիրով սպասում ենք Ձեզ...

Է Ր Ո Ւ Դ Ի Տ

x3		x2			x2		x3
		x3		x2		x3	
x2				Յ			x2
		x2	x3	Ի	x3	x2	
		Ք	Ր	Ս	Տ	Ո	Ս
		x2	x3	ՈԻ	x3	x2	
x2				Ս			x2
		x3		x2		x3	
x3		x2			x2		x3

Բառախաղ` նախատեսված 2-4 հոգու համար: Յուրաքանչյուր մասնակից իր խաղի ժամանակ պետք է կազմի նոր բառեր` օգտագործելով միայն 5 տառ:Նոր բառը պետք է ինչ-որ կերպ կապված լինի արդեն առկա որևէ բառի հետ: Կազմված բառում յուրաքանչյուր տառ ունի 1 միավորի արժեք, բացառությամբ նրանց, ովքեր կընդգրկվեն գունավորված վանդակներում: Խաղն ընթանում է մինչ 70 միավոր հավաքելը: Աղյուսակում անհմաստ բառային կուտակումների չպետք է լինեն: Խաղն ընթանում է խաչբառային սկզբունքով, այն է` եթե ուզում ենք օգտագործել ՅԻՍՈՒՍ բառի վերևի կամ ներքևի կանաչ վանդակները, ապա պետք է այնպիսի բառ գտնել, որ իր մեջ ներգրավվի նաև ՅԻՍՈՒՍ դաշտը:

Ներկայացրեց Արմեն Նիսաչյանը

Սիրելի՛ ընթերցող, դու ևս կարող ես քո մասնակցությունն ունենալ «Սերմնացան» թերթի կայացմանը: Ուղարկիր մեզ քո ստեղծագործությունները, առաջարկություններն ու դիտողությունները, որոնք մենք անպայման հաշվի կառնենք:

Սենք սպասում ենք քո արձագանքին..

<p>Մեր հասցեն` ք. Երևան, Նոր-Արեշ 22 փ., 117/2 «Վերնատուն» եկեղեցի, «Սերմնացան» խմբագրություն, Հեռ. 47 35 81, sermnacan@mail.ru</p>	<p>Գլխավոր խմբագիր` Արտավազ Թադևոսյան Խմբագիր` Արմեն Նիսաչյան Սրբագրումը` Դիանա Նազարյանի Էջադրումն ու ձևավորումը` Արմեն Նիսաչյանը</p>
--	--

ԹԵՐԹԸ ՏԱՐԱԾՎՈՒՄ Է ԱՆՎՃԱՐ